


Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԷՖԵՍ» Ապահովագրական փակ
բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2023թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0015

Երևան Պլազա

Բիզնես Կենտրոն

Գրիգոր Լուսավորիչ 9

Հ. + 374 10 500 964

Grant Thornton CJSC

Yerevan Plaza Business Center

9 Grigor Lusavorich street

0015 Yerevan, Armenia

T + 374 10 500 964

«ԷՖԵՍ» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԷՖԵՍ» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև 2023թ. հուլիսի 25-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և 2023թ. հուլիսի 25-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՄ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածատվություն: Ի լրումն՝


- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում դեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Լիլիթ Բաղդասարյան
Առաջադրանքի ղեկավար



22 մարտի, 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն


Հազար ՀՀ դրամ

	Օսուրթ.	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Ակտիվներ</i>		
Դրամական միջոցներ	6	187,665
Ավանդներ բանկերում	7	1,351,801
Ներդրումներ արժեթղթերում	8	906,153
Վերաապահովագրական ակտիվներ	9	4,196
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	350,886
Հետաձգված հարկային ակտիվ	21	66,871
Այլ ակտիվներ	11	88,747
Ընդամենը՝ ակտիվներ		<u>2,956,319</u>
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>		
<i>Պարտավորություններ</i>		
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	9	939,338
Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	9	83,870
Այլ պարտավորություններ	12	222,950
Ընդամենը՝ պարտավորություններ		<u>1,246,158</u>
<i>Սեփական կապիտալ</i>		
Բաժնետիրական կապիտալ	13	2,000,000
Կուտակված վնաս		(291,677)
Այլ պահուստներ		1,838
Ընդամենը՝ սեփական կապիտալ		<u>1,710,161</u>
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		<u>2,956,319</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մարտի 22-ին:

Արևշատ Մելիքսեյան

Գործադիր տնօրեն



Քնար Պետրոսյան

Գլխավոր հաշվապահ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 82-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի
31-ին ավարտված
Ժամանակաշրջան

	Ծանոթ.	
Ապահովագրական հատույթ	14	632,375
Ապահովագրական ծառայությունների գծով ծախս	15	(541,705)
Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք նախքան պահվող վերաապահովագրության պայմանագրերը		90,670
Վերաապահովագրավճարների բաշխում	14	(149,511)
Վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարներ	16	50,244
Պահվող վերաապահովագրության պայմանագրերից գուտ ծախս		(99,267)
Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք		(8,597)
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	17	69,729
Տոկոսային ծախս	17	(943)
Ֆինանսական ակտիվների պարտքային կորուստների գծով ծախս	18	(14,174)
Արտարժույթի փոխարկումից գուտ եկամուտ		3,195
Զուտ ներդրումային եկամուտ		57,807
Այլ եկամուտ		1,938
Մաշվածություն և ամորտիզացիա	10	(8,390)
Անձնակազմի գծով ծախսեր	19	(336,810)
Այլ ծախսեր	20	(64,900)
Վնաս մինչև հարկումը		(358,952)
Շահութահարկի գծով փոխհատուցում	21	67,275
Ժամանակաշրջանի վնաս		(291,677)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի
31-ին ավարտված
Ժամանակաշրջան

Ծանոթ.

Այլ համապարփակ ֆինանսական արդյունք

Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս

Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած գուտ օգուտ	1,627
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	615
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	(404)
Ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի	1,838
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	(289,839)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 82-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
Հաշվեկշիռը 2023թ. հունիսի 25-ի դրությամբ	-	-	-	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	2,000,000	-	-	2,000,000
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	<u>2,000,000</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>2,000,000</u>
Ժամանակաշրջանի վնաս	-	-	(291,677)	(291,677)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>				
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ	-	1,627	-	1,627
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	615	-	615
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	(404)	-	(404)
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	<u>-</u>	<u>1,838</u>	<u>(291,677)</u>	<u>(289,839)</u>
Հաշվեկշիռը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>2,000,000</u>	<u>1,838</u>	<u>(291,677)</u>	<u>1,710,161</u>

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 82-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից
մինչև
2023թ. դեկտեմբերի
31-ին ավարտված
ժամանակաշրջան

<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>	
Ստացված ապահովագրավճարներ	1,437,695
Փոխանցված վերաապահովագրավճարներ	(15,222)
Վճարված հատուցումներ	(232,049)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(257,693)
Վճարումներ մատակարարներին	(84,665)
Վճարումներ միջնորդներին	(9,321)
Վճարված հարկեր, բացառությամբ շահութահարկի	(50,378)
Այլ ելքեր	(14,264)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված մինչև շահութահարկը	774,103
Վճարված շահութահարկ	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	774,103
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>	
Ներդրումային արժեթղթերի առք	(886,968)
Բանկերում ավանդների ներդրում	(1,310,325)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(387,077)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(2,584,370)
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>	
Բաժնետիրական կապիտալի թողարկում	2,000,000
Վարձակալության գծով պարտավորության մարում	(2,577)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	1,997,423

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից
մինչև
2023թ. դեկտեմբերի
31-ին ավարտված
ժամանակաշրջան

Դրամական միջոցների գուտ աճ	187,156
Դրամական միջոցներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	-
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	509
Դրամական միջոցներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 6)	187,665

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 82-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԷՖԵՍ» Ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2023թ. հուլիսի 25-ին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 25.07.2023թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 0012 արտոնագրային համարով:

Ընկերությունը զբաղվում է ընդհանուր ապահովագրական գործունեությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում: Ընկերության կողմից կնքվող ապահովագրական պայմանագրերի հիմնական տեսակներն են՝ դժբախտ պատահարներից, առողջության, ցամաքային տրանսպորտի, փոխադրվող գույքի (բեռների), հրդեհից և բնական աղետներից, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ֆինանսական վնասների, ընդհանուր պատասխանատվության, արտասահման մեկնողներին աջակցության ապահովագրությունը: Բացի այդ Ընկերությունն իրականացնում է օդանավերի, ինչպես նաև դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 0012, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հրաչյա Քոչարի փողոց, 35/1:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 101:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում, և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են Ռուսաստանի՝ ներառյալ ռուսական բանկերի, ապահովագրական ընկերությունների, այլ կազմակերպությունների և անհատների դեմ տնտեսական խիստ պատժամիջոցների մասին: Պատերազմը դեռ շարունակվում է, բայց արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը դրսևորել է շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Տնտեսական աճի և ակտիվության տեմպերը շարունակում են բարձր մնալ՝ պայմանավորված նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքով: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում բիզնես շահեր ունենալու, հիմնելու կամ տնօրինելու իրավունքի սահմանափակումներ չկան: Բիզնեսի գրանցման ընթացակարգերը հիմնականում պարզ են:

2023 թվականի օգոստոսի 25-ին Standard & Poor's-ը բարձրացրել է Հայաստանի վարկային վարկանիշը մինչև «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Moody's-ի Հայաստանի վարկային վարկանիշը վերջին անգամ սահմանվել է «Ba3» մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ 2023 թվականի հունիսի 22-ին: Fitch Ratings-ի կողմից Հայաստանի թողարկողի դեֆոլտի վարկանիշը 2023թ-ի հուլիսին «B+»-ից դարձել է «BB-»՝ կայուն կանխատեսմամբ: Միջազգային վարկանիշային

գործակալությունների կողմից տրված վարկանիշի բարձրացումն արտացոլում է տնտեսական աճի ուժեղ հեռանկարները, պետական պարտքի կայունացումը միջինից ցածր մակարդակներում, կայուն հարկաբյուջետային կատարողականի հեռանկարը և արտաքին հաշվեկշռի բարելավումը:

2023թ. Հայաստանի կառավարությունը հաստատել է առողջության պարտադիր համապարփակ ապահովագրության համակարգը, որն ակնկալվում է, որ մինչև 2027թ. կգործի ամբողջ բնակչությանը համար:

2023թ. ապրիլին Հայաստանն անցում է կատարել տրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրության ազատականացված համակարգին: Այս փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է ընձեռում ռիսկերը գնահատելուց հետո յուրաքանչյուր պայմանագրի գծով ապահովագրավճարները սահմանել անհատապես:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Մույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, նորմատիվային կապիտալի պահանջները և ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Մույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

Քանի որ 2023 թվականն Ընկերության գործունեության առաջին տարին է, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները ներառում են հուլիսի 25-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանը:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են

ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),*
- *Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),*
- *Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),*
- *Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*
- *Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություններ)*
- *ՖՀՄՍ S1-ը նդհանուր պահանջներ կայունության հետ կապված ֆինանսական տեղեկատվության բացահայտման համար և ՖՀՄՍ S2- կլիմայի հետ կապված բացահայտումներ:*

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրեր

4.1.1 Դասակարգում

Ապահովագրության պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադիրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադիրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի

ապահովադրի վրա: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը ցանկացած սցենարի դեպքում կարող էր ապահովագրողի կողմից նշանակալի լրացուցիչ հատուցումների վճարման պատճառ դառնալ, բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն առևտրային բովանդակություն: Ապահովագրության պայմանագրերը կարող են նաև փոխանցել ֆինանսական ռիսկ: Ֆինանսական ռիսկը սահմանված տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գնի կամ դրույքների ինդեքսի, վարկանիշի կամ վարկային ինդեքսի կամ այլ փոփոխականի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր մինչ իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

4.1.2 Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերից բաղադրիչների առանձնացումը

Ընկերությունը գնահատում է իր ոչ կյանքի ապահովագրության և վերաապահովագրության գործիքները՝ որոշելու, թե արդյոք դրանք պարունակում են առանձնացվելի բաղադրիչներ, որոնք պետք է հաշվառվեն ոչ թե ՖՀՄՍ 17-ի, այլ մեկ այլ ՖՀՄՍ-ի համաձայն: Առանձնացվելի բաղադրիչներն առանձնացնելուց հետո Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 17-ը ապահովագրության պայմանագրի մնացած բոլոր (հիմնական) բաղադրիչների նկատմամբ: Ընկերության գործիքները ներկայում չեն պարունակում որևէ բաղադրիչ, որը պահանջում է առանձնացում:

4.1.3 Ընդհանրացման մակարդակ

Ընկերության ապահովագրության և վերաապահովագրության գործիքների ընդհանրացման մակարդակը սահմանվում է առաջին հերթին բիզնեսը պորտֆելների բաժանելով: Պորտֆելները բաղկացած են համանման ռիսկերի ենթակա և միասին կառավարվող պայմանագրերից: Ենթադրվում է, որ նույն ապրանքային ուղղությունում ներառված պայմանագրերը կունենան համանման ռիսկեր և, հետևաբար, ակնկալվում է, որ կլինեն միևնույն պորտֆելում, եթե դրանք կառավարվում են միասին: Պորտֆելները հետագայում բաժանվում են ըստ թողարկման տարվա և շահութաբերության ճանաչման և չափման նպատակով: Ընդհանրացման մակարդակի համար նախատեսված ոչ մի խումբ չի կարող պարունակել մեկ տարուց ավելի տարբերությամբ թողարկված պայմանագրեր: Պայմանագրերի խմբերի շահութաբերությունը գնահատվում է ակտուարական գնահատման մոդելներով, որոնք հաշվի են առնում առկա և նոր բիզնեսը: Այսպիսով, թողարկման յուրաքանչյուր տարվա ընթացքում պայմանագրերի պորտֆելները բաժանվում են հետևյալ երեք խմբերի՝

- պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին դասակարգվել են որպես անբարենպաստ, եթե այդպիսիք առկա են,
- պայմանագրերի խումբ, որոնց սկզբնական ճանաչման պահին նշանակալի հավանականություն չկա, որ դրանք հետագայում կդառնան անբարենպաստ, եթե այդպիսիք առկա են,
- պորտֆելի մնացած պայմանագրերի խումբ, եթե այդպիսիք առկա են:

Ընկերությունը նույնականացրել է ապահովագրության պայմանագրերի հետևյալ պորտֆելները.

- Գույքի ապահովագրության պայմանագրեր,
- Բեռի (փոխադրվող գույքի) ապահովագրության պայմանագրեր,

- Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր,
- Ցամաքային ավտոտրանսպորտի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրեր,
- Առողջության կամավոր ապահովագրության պայմանագրեր,
- Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանագրեր,
- Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր,
- Ճամփորդության աջակցության ապահովագրության պայմանագրեր:

Սկզբնական ճանաչման պահին ապահովագրության պայմանագիրն անբարենպաստ է, եթե պայմանագրին վերագրված՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի, ձեռքբերման գծով նախկինում ճանաչված դրամական հոսքերի և պայմանագրից առաջացող ցանկացած այլ դրամական հոսքերի՝ սկզբնական ճանաչման պահին ընդհանուր գումարը հանգեցնում է զուտ արտահոսքի: Ընկերությունը խմբավորում է նմանատիպ պայմանագրերը՝ դրանք առանձնացնելով անբարենպաստ չհանդիսացող պայմանագրերից: Ընկերությունը նույնականացնում է անբարենպաստ պայմանագրերի խումբը՝ գնահատելով պայմանագրերի փաթեթը, այլ ոչ թե առանձին պայմանագրերը:

Պայմանագրերի համար, որոնք անբարենպաստ պայմանագրեր չեն, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը գնահատում է, որ հետագայում անբարենպաստ դառնալու էական հնարավորություն չկա՝ գնահատելով կիրառելի փաստերի և հանգամանքների փոփոխությունների հավանականությունը: Ընկերությունը դիտարկում է փաստեր և հանգամանքներ՝ պարզելու համար, թե արդյոք պայմանագրերի խումբը անբարենպաստ է՝ հիմնվելով հետևյալի վրա.

- գնային տեղեկատվություն (ներառյալ գեղչերը),
- իր կողմից ճանաչված նմանատիպ պայմանագրեր,
- արտաքին միջավայրի գործոններ, օրինակ՝ շուկայի փորձի կամ կանոնակարգերի փոփոխություն:

Ընկերությունը բաժանում է պահվող վերաապահովագրության պայմանագրերի պորտֆելները վերը նշված նույն սկզբունքների կիրառմամբ, բացառությամբ անբարենպաստ վերաապահովագրության պայմանագրերի, որոնց համար սկզբնական ճանաչման ժամանակ առկա է զուտ օգուտ:

Պահվող վերաապահովագրության պայմանագրերի որոշ խմբերի դեպքում խումբը կարող է բաղկացած լինել մեկ պայմանագրից:

4.1.4 Ճանաչում

Ընկերությունն իր կողմից թողարկվող ապահովագրության պայմանագրերի խումբը պետք է ճանաչի հետևյալներից ամենավաղ ամսաթվին.

- պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի սկիզբ,
- ամսաթիվ, երբ խմբի ապահովադրից առաջին վճարումը դառնում է ստացման ենթակա,
- անբարենպաստ պայմանագրերի խմբի համար, երբ խումբը դառնում է անբարենպաստ:

Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի խումբը պետք է ճանաչի հետևյալներից ավելի վաղ ամսաթվին.

- պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի սկիզբ: Այնուամենայնիվ, Ընկերությունը հետաձգում է պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի ճանաչումը, եթե պահվող վերաապահովագրության պայմանագրերը ապահովում են համամասնական ծածկույթ՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերի ծածկույթի ժամանակահատվածի

սկզբի դրությամբ կամ հիմքում ընկած ցանկացած պայմանագրի սկզբնական ճանաչման պահին, կախված, թե որն է ավելի ուշ տեղի ունենում, և

- ամսաթիվ, երբ Ընկերությունը ճանաչում է հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խումբ, եթե Ընկերությունը կնքել է համապատասխան վերաապահովագրության պայմանագիր, որը պահվում է այդ ամսաթվին կամ դրանից առաջ կնքված վերաապահովագրության պայմանագրերի խմբում:

Ընկերությունը նոր պայմանագրեր է ավելացնում խմբին այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այդ պայմանագիրը համապատասխանում է վերը նշված չափանիշներից մեկին:

4.1.5 Պայմանագրի շրջանակներ

Ընկերությունը ապահովագրության պայմանագրերի խմբի չափման մեջ ներառում է բոլոր այն ապագա դրամական հոսքերը, որոնք գտնվում են խմբի յուրաքանչյուր պայմանագրի շրջանակներում: Դրամական հոսքերը ապահովագրության պայմանագրի շրջանակներում են գտնվում, եթե դրանք առաջանում են իրական իրավունքներից և պարտականություններից, որոնք գոյություն ունեն այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որում Ընկերությունը կարող է պարտադրել ապահովադրին վճարելու ապահովագրական վճարներ կամ որում Ընկերությունն ապահովադրին ծառայություններ մատուցելու իրական պարտականություն ունի: Ծառայություններ մատուցելու իրական պարտականությունը դադարում է, երբ

- Ընկերությունը գործնականում հնարավորություն ունի վերանայելու կոնկրետ ապահովադրի ռիսկերը և արդյունքում՝ կարող է սահմանել գին կամ օգուտների մակարդակ, որոնք ամբողջությամբ արտացոլում են այդ ռիսկերը, կամ
- Ընկերությունը գործնականում հնարավորություն ունի վերանայելու տվյալ պայմանագիրը ներառող ապահովագրության պայմանագրերի պորտֆելի ռիսկերը և արդյունքում՝ կարող է սահմանել գին կամ օգուտների մակարդակ, որոնք ամբողջությամբ արտացոլում են այդ պորտֆելի ռիսկը և մինչև ռիսկերի վերանայման ամսաթիվը առկա ծածկույթի համար ապահովագրական վճարի գին որոշելիս հաշվի չեն առնվում վերանայման ամսաթվին հաջորդող ժամանակաշրջաններին վերաբերող ռիսկերը:

Պարտավորությունը կամ ակտիվը, որը վերաբերում է ակնկալվող ապահովագրական վճարների կամ ակնկալվող պահանջների հետ կապված որևէ գումարի, որը ապահովագրության պայմանագրի շրջանակներից դուրս է, չպետք է ճանաչվի: Նմանատիպ գումարները վերաբերում են ապահովագրության ապագա պայմանագրերին:

4.1.6 Չափում

Ապահովագրության պայմանագրեր – սկզբնական չափում

Ընկերությունը կիրառում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը (PAA) բոլոր թողարկված ապահովագրության պայմանագրերի և պահվող վերաապահովագրության պայմանագրերի նկատմամբ, քանի որ.

- Խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակահատվածը, ներառյալ պայմանագրի շրջանակներում բոլոր ապահովագրական վճարներից առաջացած ծածկույթը հիմնականում մեկ տարի է կամ ավելի քիչ,
- Մեկ տարուց ավելի երկար պայմանագրերի դեպքում Ընկերությունը մոդելավորել է ապագա հնարավոր սցենարներ և ողջամտորեն ակնկալում է, որ ապահովագրական վճարի բաշխման մոտեցման համաձայն այդ պայմանագրերը պարունակող խմբի համար մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափումը էականորեն չի տարբերվի ընդհանուր մոդելի կիրառմամբ կատարվող չափումից: Էականությունը գնահատելիս Ընկերությունը հաշվի է առել նաև այնպիսի որակական գործոններ, ինչպիսիք են ռիսկի բնույթը և իր գործունեության ոլորտների տեսակները:

Գույքի ապահովագրության և ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պորտֆելները ներառում են մեկ տարուց ավել ծածկույթի ժամկետով պայմանագրեր: Այնուամենայնիվ, մնացորդային ծածկույթի համար պարտավորության չափման հարցում ապահովագրական վճարի բաշխման մոտեցման և ընդհանուր մոդելի միջև էական տարբերություն չկա, ուստի դրանք համապատասխանում են ապահովագրական վճարի բաշխման մոտեցման չափանիշներին: Ընկերության ապահովագրության մնացած պորտֆելների ծածկույթի ժամկետը կազմում է մեկ տարի կամ ավելի քիչ, հետևաբար, կիրառվում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցմամբ:

Ընկերությունը չի կիրառում ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, երբ պայմանագրերի խմբի գործողության ժամկետի սկզբի դրությամբ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում ակնկալում է նշանակալի փոփոխականություն, որն ազդելու է ժամանակաշրջանի ընթացքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափման վրա՝ նախքան պահանջի տեղի ունենալը:

Պայմանագրերի խմբի համար, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ անբարենպաստ չեն, Ընկերությունը մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը չափում է հետևյալ կերպ՝

- ապահովագրական վճարներ՝ ստացված սկզբնական ճանաչման պահին, եթե այդպիսիք առկա են,
- հանած այդ պահի դրությամբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, բացառությամբ, եթե կազմակերպությունը նախընտրել է այդ վճարումները ճանաչել որպես ծախս,
- գումարած կամ հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ճանաչված ակտիվի կամ պարտավորության՝ այդ ամսաթվի դրությամբ ապաճանաչումից առաջացող ցանկացած գումար,
- ցանկացած այլ ակտիվ կամ պարտավորություն, որը նախկինում ճանաչվել է պայմանագրերի խմբի հետ կապված դրամական հոսքերի առնչությամբ, որոնք Ընկերությունը վճարում կամ ստանում է մինչև ապահովագրության պայմանագրերի խմբի ճանաչումը:

Այն դեպքերում, երբ փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ պայմանագրերը անբարենպաստ են սկզբնական ճանաչման պահին, Ընկերությունը լրացուցիչ վերլուծություն է կատարում՝ որոշելու, թե արդյոք պայմանագրից ակնկալվում է զուտ արտահոսք: Նմանատիպ անբարենպաստ պայմանագրերն խմբավորվում են՝ առանձնացվելով անբարենպաստ չհանդիսացող պայմանագրերից, և Ընկերությունը զուտ արտահոսքերի հետ կապված՝ շահույթում կամ վնասում ճանաչում է կորուստ, որի արդյունքում խմբի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասար է պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերին: Ընկերությունը ձևավորում է անբարենպաստ խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչ՝ ճանաչված կորուստներն արտացոլելու համար: Վնասի բաղադրիչի վերաբերյալ լրացուցիչ բացահայտումների համար տես՝ 4.1.13 ծանոթագրությունը:

Պահվող վերաապահովագրության պայմանագրեր - սկզբնական չափում

Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի չափումն իրականացնում է նույն սկզբունքների համաձայն, ինչ թողարկված ապահովագրական պայմանագրերի չափումը: Սակայն դրանք հարմարեցվում են պահվող վերաապահովագրության պայմանագրերին բնորոշ հատկանիշներն արտացոլելու համար, որոնք տարբերվում են թողարկված ապահովագրության պայմանագրերից, օրինակ ծախսերի գեներացում կամ հասույթի փոխարեն ծախսերի նվազեցում:

Ընկերության պահվող վերաապահովագրության օրիգատոր պայմանագրերը ներառում են մեկ տարուց ավել ծածկույթի ժամկետով վերաապահովագրական պորտֆելներ: Ապահովագրական վճարի բաշխման մոտեցման և ընդհանուր մոդելով չափված մնացորդային ծածկույթի պարտավորության մեծությունների միջև էական տարբերություն չի առաջանում:

Ընկերության կողմից պահվող վերաապահովագրության մնացած պորտֆելների ծածկույթի ժամկետը կազմում է մեկ տարի կամ ավելի քիչ, հետևաբար, կիրառվում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը:

Երբ Ընկերությունը հիմքում ընկած ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի սկզբնական ճանաչման ժամանակ ճանաչում է վնաս կամ երբ խմբին ավելացվում են լրացուցիչ անբարենպաստ ապահովագրական պայմանագրեր, Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի մնացորդային ծածկույթի գծով ակտիվի կազմում սահմանում է վնասի փոխհատուցման բաղադրիչ՝ արտացոլելով վնասի փոխհատուցումը:

Ընկերությունը հաշվարկում է վնասի փոխհատուցման բաղադրիչը՝ բազմապատկելով հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի գծով ճանաչված վնասը և հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսը, որոնք Ընկերությունն ակնկալում է փոխհատուցել պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հաշվին: Ընկերությունը կիրառում է պարբերական և խելամիտ մեթոդ որոշելու ապահովագրության պայմանագրերի խմբի գծով վնասների այն մասը, որը վերաբերում է պահվող վերաապահովագրության պայմանագրերով ծածկվող ապահովագրության պայմանագրերին, որտեղ հիմքում ընկած խմբի որոշ պայմանագրեր չեն ծածկվում պահվող վերաապահովագրության պայմանագրերով:

Վնասի փոխհատուցման բաղադրիչը ճշգրտում է մնացորդային ծածկույթի գծով ակտիվի հաշվեկշռային արժեքը:

Ապահովագրության պայմանագրեր - հետագա չափում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում չափում է մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ մնացորդային ծածկույթի գծով պարտավորություն:

- գումարած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ապահովագրական վճարները,
- հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը՝ բացառությամբ, եթե Ընկերությունը ընտրում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ճանաչել որպես ծախս դրանց տեղի ունենալու պահին,
- գումարած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիային առնչվող ցանկացած գումար, որը հաշվետու ժամանակաշրջանում ճանաչվել է որպես ծախս,
- գումարած ֆինանսավորման բաղադրիչի գծով ցանկացած ճշգրտում, որտեղ կիրառելի է,
- հանած այդ ժամանակաշրջանում տրամադրված ծածկույթի գծով որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումար,
- հանած ցանկացած ներդրումային բաղադրիչ, որը վճարվել կամ փոխանցվել է կրած պահանջների գծով պարտավորությանը:

Ընկերությունը գնահատում է կրած պահանջների գծով պարտավորությունը որպես պայմանագրի կատարման գծով դրամական հոսքեր, որոնք վերաբերվում են կրած պահանջների գծով պարտավորությանը: Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը անաչառ կերպով հաշվի են առնում ամբողջ հիմնավոր և ողջամիտ տեղեկատվությունը տվյալ ապագա դրամական հոսքերի մեծության, ժամկետների և անորոշությունների վերաբերյալ, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, դրանք արտացոլում են ընթացիկ գնահատումները Ընկերության տեսանկյունից և ներառում են հստակ ճշգրտում ոչ ֆինանսական ռիսկի գծով (ռիսկերի ճշգրտում): Ընկերությունը չի ճշգրտում ապագա դրամական հոսքերը փողի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ազդեցության համար՝ կրած պահանջների գծով պարտավորությունները գնահատելիս, որոնք պետք է վճարվեն դրանց առաջացման պահից մեկ տարվա ընթացքում:

Եթե ծածկույթի ժամանակահատվածում փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ ապահովագրության պայմանագրերի խումբն անբարենպաստ է, Ընկերությունը անբարենպաստ պայմանագրերի խմբի գծով գուտ արտահոսքերի հետ կապված՝ շահույթում կամ վնասում ճանաչում է կորուստ, որի արդյունքում խմբի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասար է պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերին: Ընկերությունն այսպիսի անբարենպաստ խմբի համար ձևավորում է անբարենպաստ խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչ՝ ճանաչված կորուստներն արտացոլելու համար: Հավելյալ բացահայտումների համար տես՝ 4.1.13 ծանոթագրությունը:

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը բաշխվում են գծային հիմունքով՝ որպես ապահովագրական վճարների մի մաս շահույթի կամ վնասի կազմում:

Պահվող վերաապահովագրության պայմանագրեր - հետագա չափում

Պահվող վերաապահովագրության պայմանագրերի հետագա չափումն իրականացվում է նույն սկզբունքների համաձայն, ինչ թողարկված ապահովագրական պայմանագրերի չափումը և հարմարեցում է՝ արտացոլելու պահվող վերաապահովագրության պայմանագրերին բնորոշ հատկանիշները:

Եթե Ընկերությունը սահմանել է վնասի փոխհատուցման բաղադրիչ, Ընկերությունը հետագայում նվազեցնում է վնասի փոխհատուցման բաղադրիչը մինչև գրոյի՝ հիմքում ընկած ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի նվազումներին համապատասխան, որպեսզի արտացոլի, որ վնասի փոխհատուցման բաղադրիչը չպետք է գերազանցի հիմքում ընկած ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի վնասի բաղադրիչի հաշվեկշռային արժեքի այն մասը, որը Ընկերությունն ակնկալում է փոխհատուցել պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հաշվին:

4.1.7 Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը առաջանում են ապահովագրության պայմանագրերի խմբի վաճառքի, տեղաբաշխման և կնքման հետ կապված ծախսերից, որոնք ուղղակիորեն վերագրելի են այն ապահովագրության պայմանագրերի պորտֆելին, որին այդ խումբը պատկանում է:

Ընկերությունը օգտագործում է պարբերական և խելամիտ մեթոդ՝ բաշխելու

- պահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ապահովագրության պայմանագրերի խմբին,
- ապահովագրական պայմանագրերի պորտֆելին ուղղակիորեն վերագրելի պահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն պորտֆելի պայմանագրերի խմբին:

Այն դեպքում, երբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը վճարվել կամ առաջացել են նախքան ապահովագրական պայմանագրերի համապատասխան խմբի՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվելը, յուրաքանչյուր համապատասխան խմբի համար ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով առանձին ակտիվ է ճանաչվում:

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվը ապաճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, երբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ներառվում են ապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի սկզբնական չափման մեջ:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Ընկերությունը վերանայում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գումարները, որոնք բաշխված են դեռևս չճանաչված ապահովագրության պայմանագրերի խմբերի միջև, որպեսզի

արտացոլի կիրառված տեղաբաշխման մեթոդի հետ կապված ենթադրությունների փոփոխությունները:

Ցանկացած վերաբաշխումից հետո Ընկերությունը գնահատում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվի փոխհատուցելիությունը, արդյոք փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ ակտիվը կարող է արժեզրկվել: Փոխհատուցելիությունը գնահատելիս Ընկերությունը կիրառում է.

- արժեզրկման ստուգում գոյություն ունեցող կամ ապագա խմբի ապահովագրության պայմանագրերի մակարդակով, և
- արժեզրկման լրացուցիչ ստուգում, որը հատկապես վերաբերում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերին, որոնք բաշխված են ըստ ակնկալվող ապագա պայմանագրերի վերակնքումների:

Եթե արժեզրկումից կորուստ է ճանաչվում, ակտիվի հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունը շահույթում կամ վնասում ճանաչում է նախկինում ճանաչված արժեզրկումից կորստի մի մասի կամ ամբողջի հակադարձումը և ավելացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքը այն դեպքում, եթե արժեզրկման պատճառ հանդիսացող պայմաններն այլևս գոյություն չունեն կամ բարելավվել են:

4.1.8 Վերափոխում և ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ապահովագրության պայմանագիրը, երբ՝

- պայմանագրին վերաբերող իրավունքներն ու պարտականությունները մարվել են (այսինքն՝ կատարվել է կամ չեղարկվել, ժամկետը լրացել է), կամ
- պայմանագիրը վերափոխվում է այնպես, որ վերափոխումը հանգեցնում է չափման մոդելի կամ պայմանագրի բաղադրիչի չափման կիրառելի ստանդարտի փոփոխության, էապես փոխում է պայմանագրային շրջանակը կամ պահանջում է վերափոխված պայմանագիրը ներառել այլ խմբում: Նման դեպքերում Ընկերությունն ապաճանաչում է սկզբնական պայմանագիրը և վերափոխված պայմանագիրը ճանաչում է որպես նոր պայմանագիր:

Եթե վերափոխումը չի դիտարկվում որպես ապաճանաչում, Ընկերությունը ճանաչում է պայմանագրի վերափոխման համար վճարված կամ վերափոխումից ստացված գումարները՝ որպես մնացորդային ծածկույթի համապատասխան պարտավորության ճշգրտում:

4.1.9 Ներկայացում

Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում առանձին ներկայացնում է հետևյալ խմբերի հաշվեկշռային արժեքները՝ թողարկված ապահովագրության պայմանագրեր, որոնք ակտիվներ են, թողարկված ապահովագրության պայմանագրեր, որոնք պարտավորություններ են, պահվող վերաապահովագրության պայմանագրեր, որոնք ակտիվներ են, պահվող վերաապահովագրության պայմանագրեր, որոնք պարտավորություններ են:

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվները, որոնք ճանաչվել են մինչև համապատասխան ապահովագրական պայմանագրերը ներառվել են ապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբերի հաշվեկշռային արժեքում, բաշխվում են ապահովագրության պայմանագրերի պորտֆելների հաշվեկշռային արժեքին, որոնց դրանք վերաբերում են:

Ընկերությունը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված ապահովագրության գործունեությունից ընդհանուր գումարը բաժանում է ապահովագրական ծառայությունների արդյունքի՝ բաղկացած ապահովագրական

հասույթից ու ապահովագրական ծառայությունների գծով ծախսերից, և ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի միջև:

Ընկերությունը չի բաժանում ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման փոփոխությունը ֆինանսական և ոչ ֆինանսական մասերի միջև և դիտարկում է ողջ փոփոխությունը որպես ապահովագրական ծառայությունների արդյունքի մաս:

Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներն ու ծախսերը թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներից կամ ծախսերից առանձին է ներկայացնում:

4.1.10 Ապահովագրական հասույթ

Ժամանակաշրջանի ապահովագրական հասույթը տվյալ ժամանակաշրջանին վերագրված ապահովագրական վճարների ակնկալվող մուտքերն են: Ընկերությունը ապահովագրական վճարների ակնկալվող մուտքերը բաշխում է ծածկույթի յուրաքանչյուր ժամանակաշրջանի վրա ժամանակի անցմանը համամասնորեն, սակայն, եթե ծածկույթի ժամանակահատվածի ընթացքում ռիսկից ազատման ակնկալվող սխեման նշանակալիորեն տարբերվում է ժամանակի անցումն արտացոլող սխեմայից, ապա բաշխումը կատարվում է ապահովագրական ծառայությունների գծով ծախսերը կրելու ակնկալվող ժամկետի հիման վրա:

Ընկերությունն անհրաժեշտության դեպքում փոփոխում է բաշխման հիմունքը վերը նշված մեթոդների միջև, եթե փաստերն ու հանգամանքները փոխվում են: Փոփոխությունը հաշվառվում է առաջընթաց որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն:

Ներկայացված ժամանակաշրջանների համար ամբողջ հասույթը ճանաչվել է ժամանակի անցմանը համամասնորեն:

4.1.11 Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր

Ապահովագրական ծառայությունների գծով ծախսերը, որոնք առաջանում են ապահովագրության պայմանագրերից, ճանաչվում են շահույթում կամ վնասում հիմնականում, երբ դրանք տեղի են ունենում: Դրանք ներառում են հետևյալ հոդվածները.

- Կրած պահանջներ և այլ ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր,
- Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա. Ընկերությունը ամորտիզացնում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը գծային հիմունքով՝ պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածում,
- Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ և այդպիսի վնասների հակադարձում, տես՝ 4.1.13 ծանոթագրությունը,
- Կրած պահանջների գծով պարտավորությունների ճշգրտումներ, որոնք չեն բխում փողի ժամանակային արժեքի, ֆինանսական ռիսկի և դրանց փոփոխություններից,
- Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվների արժեզրկումից կորուստ և այդպիսի արժեզրկումից կորստի հակադարձում:

4.1.12 Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով ծախսեր

Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ ծախսերը կազմում են վերաապահովագրողներին բաշխված ապահովագրավճարներ հանած վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարները: Ընկերությունը ճանաչում է վերաապահովագրողներին բաշխված ապահովագրավճարները շահույթում կամ վնասում, երբ վերաապահովագրության պայմանագրերի խմբերի շրջանակում ծառայություններ է ստանում:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար վերաապահովագրողներին բաշխված ապահովագրավճարները տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների ստացման համար ակնկալվող ապահովագրավճարների գումարներն են:

Վերաապահովագրության պայմանագրերի խմբի համար, որոնք վերաբերում են հիմքում ընկած անբարենպաստ պայմանագրերին, Ընկերությունը սահմանում է մնացորդային ծածկույթի գծով ակտիվի վնասի փոխհատուցման բաղադրիչ, որպեսզի ներկայացնի ճանաչված վնասների վերականգնումը (տես՝ ծանոթագրություն 4.1.14):

4.1.13 Վնասի բաղադրիչներ

Ընկերությունը ենթադրում է, որ ոչ մի պայմանագիր սկզբնական ճանաչման ժամանակ անբարենպաստ չէ, եթե փաստերն ու հանգամանքները այլ բան չեն ցույց տալիս: Եթե դա այդպես չէ, և եթե ծածկույթի ժամանակահատվածի ընթացքում 4.1.3 ծանոթագրությունում նշված փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ ապահովագրական պայմանագրերի խումբը անբարենպաստ է, Ընկերությունը սահմանում է վնասի բաղադրիչ՝ երբ խմբի մնացորդային ծածկույթի կատարման գծով դրամական հոսքերը գերազանցում են խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը, ինչպես սահմանված է 4.1.6 ծանոթագրությունում: Ըստ այդմ, մինչև պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի ավարտը վնասի բաղադրիչը կգրոյանա:

4.1.14 Վնասի փոխհատուցման բաղադրիչներ

Ինչպես նկարագրված է 4.1.3 ծանոթագրությունում, երբ Ընկերությունը ճանաչում է վնաս՝ հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի սկզբնական ճանաչման ժամանակ, կամ երբ խմբին ավելացվում են լրացուցիչ անբարենպաստ ապահովագրության պայմանագրեր, Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի համար սահմանում է մնացորդային ծածկույթի գծով ակտիվի մասով վնասի փոխհատուցման բաղադրիչ, որն արտացոլում է վնասների ակնկալվող փոխհատուցումը:

Վնասների փոխհատուցման բաղադրիչը հետագայում նվազեցվում է մինչև զրոյի՝ հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի նվազեցումներին համապատասխան, որպեսզի արտացոլվի, որ վնասի փոխհատուցման բաղադրիչը չպետք է գերազանցի հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի վնասի բաղադրիչի հաշվեկշռային արժեքի այն մասը, որն Ընկերությունն ակնկալում է վերականգնել պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հաշվին:

4.1.15 Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր

Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը պայմանավորված են ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքի փոփոխությունով, որն առաջանում է՝

- փողի ժամանակային արժեքի և փողի ժամանակային արժեքի փոփոխության ազդեցությունից, և
- ֆինանսական ռիսկի ու ֆինանսական ռիսկի փոփոխության ազդեցությունից:

Ընկերությունը չի տարանջատում ֆինանսական եկամուտներն ու ծախսերը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջև, այլ ամբողջությամբ ներկայացնում է շահույթ կամ վնասում:

4.2 Ֆինանսական գործիքներ

4.2.1 Ճանաչում և սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից:

Ֆինանսական գործիքներն սկզբնապես ճանաչվում են գործարքի ամսաթվին և չափվում են իրական արժեքով: Գործարքի գծով ծախսերը ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

4.2.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Պարտքային գործիքը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական ակտիվները որպես ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) չափվող:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույնս արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Ընկերության սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Ընկերությունը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Պարտքային գործիքի դեպքում սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և պարտքային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Ընկերությունը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով չափվող:

4.2.3 Հետագա չափում

Սկզբնական չափումից հետո պարտքային գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելվածար և վճար կամ ծախսեր, որոնք արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի անբաժանելի մասն են: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, երբ ներդրումներն արժեզրկվում են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրամաբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո տեղափոխվում է շահույթի և վնասի կազմ:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները հաշվառվում են իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Իրական արժեքի փոփոխությունները հաշվառվում են շահույթում կամ վնասում: Ակտիվների գծով վաստակած տոկոսը պարտադիր կերպով չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և հաշվառվում՝ օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

4.2.4 Վերադասակարգում

Ընկերությունը չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները զբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Ընկերությունը ձեռք է բերում, օտարում կամ դադարեցնում է գործունեության տվյալ ուղղությունը:

4.2.5 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ընկերությունը համարում է, որ հսկողությունը փոխանցվում է միայն և միայն այն դեպքում, երբ ստացողը գործնական հնարավորություն ունի վաճառելու ակտիվն ամբողջությամբ

չկապակցված երրորդ կողմին և ի վիճակի է միակողմանիորեն և առանց փոխանցման լրացուցիչ սահմանափակումներ կիրառելու:

Այն դեպքում, երբ Ընկերությունը ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Ընկերությունը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում, որի դեպքում Ընկերությունը ճանաչում է նաև հարակից պարտավորություն: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Ընկերությունից:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.2.6 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս 4.2.5 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը էականորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.2.7 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են գուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գուման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են գուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՄ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում:

4.2.8 Արժեգրկում

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների («ԱՊԿ») գծով պահուստը բոլոր պարտքային գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: ԱՊԿ-ները հիմնված են պայմանագրային դրամական հոսքերի, որոնք վճարվում են պայմանագրի համաձայն և այն բոլոր դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք Ընկերությունը ակնկալում է ստանալ՝ զեղչված համապատասխան արդյունավետ սոկոսադրույքով:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին:

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Ընկերության պարտքային գործիքները ներառում են պետական պարտատոմսեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող ներդրումներ: Ընկերության քաղաքականությունն է չափել նման գործիքները 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների (12-ամսյա ԱՊԿ) հիմունքներով: Որևէ պարտատոմսի պարտքային ռիսկի վատթարացման դեպքում Ընկերությունը կվաճառի պարտատոմսերը և կգնի պարտատոմսեր, որոնք համապատասխանում են պահանջվող ներդրումային վարկանիշին:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է պարտագանցված (պարտքային առումով արժեգրկված), երբ պայմանագրային վճարումները ժամկետանց են 90 օր: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում Ընկերությունը կարող է նաև ֆինանսական ակտիվը համարել պարտագանցված, երբ ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ Ընկերությունը դժվար թե ստանա պայմանագրային չմարված գումարները: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, երբ պայմանագրային դրամական հոսքերը վերականգնելու ողջամիտ ակնկալիք չկա:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտագանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտագանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտագանցում տեղի ունենալու հավանականության, պարտագանցման պահին պարտքի գումարի, պարտագանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտագանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտագանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտագանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտագանցման պահին (EAD): Այն ապագա պարտագանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների

վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարը, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3, ինչպես նկարագրված է ստորև

- Փուլ 1 – 12-ամսյա ԱՊԿ-ը գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՊԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ընկերությունը հաշվարկում է 12-ամսյա ԱՊԿ-ի պահուստը՝ հիմնվելով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում պատազանցում տեղի ունենալու ակնկալիքի վրա: Այս ակնկալվող 12-ամսյա պարտազանցման հավանականությունները կիրառվում են կանխատեսվող EAD-ի նկատմամբ և բազմապատկվում ակնկալվող LGD-ով և զեղչվում համապատասխան արդյունավետ տոկոսադրույքով: Փուլ 1-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ակտիվը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ ֆինանսական ակտիվը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Մեխանիզմները նման են վերը նկարագրվածներին, սակայն PD-ները և LGD-ները գնահատվում են գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Ակնկալվող կորուստները զեղչվում են համապատասխան արդյունավետ տոկոսադրույքով: Փուլ 2-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ակտիվը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – պարտքային առումով արժեզրկված պարտքային գործիքների մասով Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Մեթոդը նման է ակտիվի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների մեթոդին, որի PD-ն սահմանվել է 100%:

Ապագայամետ տեղեկատվություն

ԱՊԿ մոդելներում Ընկերությունը հիմնվում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ՀՆԱ-ի աճ,
- Կենտրոնական բանկի բազային դրույքաչափեր:

4.2.9 Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Ընկերությունը դադարեցրել է վերականգնումը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները կրեդիտագրվում են պարտքային կորուստներից ծախսերի հետ:

4.3 Ներդրումային եկամուտների և ծախսերի ճանաչում

Ներդրումային եկամուտներն ու ծախսերը չեն առնչվում ապահովագրական պայմանագրերին և ներառում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միոցով չափվող պարտքային ներդրումներից տոկոսային եկամուտը, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներից տոկոսային եկամուտը, ներդրումային արժեթղթերի ապաճանաչումից զուտ օգուտ/(վնաս), վարձակալության գծով պարտավորության տոկոսային ծախսերը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Ներդրումների վաճառքից օգուտ/(վնաս)

Ներդրումների վաճառքից օգուտը կամ վնասը հաշվառվում է որպես զուտ վաճառքի և իրական կամ ամորտիզացված արժեքի տարբերություն և ճանաչվում է վաճառքի գործառնության պահին:

4.4 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են Ընկերության գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի խմբերը, որոնք առաջացնում են դրամական հոսքեր արտարժույթով, հաշվառվում են որպես դրամային հոդվածներ:

Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը: Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ/(ծախս) տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ տարեվերջյան փոխարժեքները.

31 դեկտեմբերի 2023թ.

ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	447.90

4.5 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.6 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները ներառում են հաշիվները բանկերում: Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.7 Ավանդներ բանկերում

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ավանդային հաշիվներ: Ֆիքսված 90 օր և ավել մարման ժամկետով բանկերում ավանդները հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Բանկերում ավանդները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.8 Ներդրումներ արժեթղթերում

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերը ապաճանաչվում է, նախկինում այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

4.9 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված

փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	2-5	20-50
Տրանսպորտային միջոցներ	4-5	20-25
Այլ հիմնական միջոցներ	Ոչ ավել քան 40	Ոչ պակաս քան 2.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությունը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.10 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 1 ից 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ: Համակարգչային ծրագրերի մշակման գծով ծախսերը (օրինակ դիզայն և նոր կամ նորացված ծրագրի թեստավորում) ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, երբ Ընկերությունը կարողանում է ցուցադրել ոչ նյութական ակտիվի ստեղծման տեխնիկական հնարավորությունն այնպես, որ այն հնարավոր լինի վաճառքի կամ օգտագործման, իր մտադրությունը ստեղծելու ոչ նյութական ակտիվ և այն օգտագործելու կամ վաճառելու, իր ունակությունը օգտագործելու կամ վաճառելու ոչ նյութական ակտիվը, այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու հնարավոր տնտեսական օգուտներ, աշխատանքներն ավարտելու բավարար միջոցների առկայություն և դրանց հստակ գնահատում: Օրագրային ապահովման գծով այլ ծախսերը ճանաչվում են դրանց ծագման պահին:

4.11 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղջվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.12 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Ընկերությունն որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզումներ:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Ընկերությունը որպես վարձատու

Որպես վարձատու՝ Ընկերությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

Գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են որպես այլ ներդրումային եկամուտ գծային հիմունքով:

4.13 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.14 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Կուտակված վնաս

Կուտակված վնասը ներառում է ընթացիկ ժամանակաշրջանի կուտակված վնասը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա:

Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

5.1 Դատողություններ

Ապահովագրության պայմանագրերի ընդհանրացման մակարդակը

Ընկերությունը նույնականացնում է ապահովագրության պայմանագրերի պորտֆելներ և սահմանում է պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին դասակարգվել են որպես անբարենպաստ և պայմանագրերի խումբ, որոնց սկզբնական ճանաչման պահին նշանակալի հավանականություն չկա, որ դրանք հետագայում կդառնան անբարենպաստ:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի չափումը

Ընկերությունը կիրառում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը՝ ապահովագրության պայմանագրերի խմբի չափումը պարզեցնելու նպատակով: Կատարված պահանջների գծով պարտավորությունները չափելիս Ընկերությունը գեղջում է դրամական հոսքերը, որոնք, ակնկալվում է, որ տեղի կունենան դրանց առաջանալու օրվանից ավելի քան մեկ տարի հետո և ներառում է ոչ ֆինանսական ռիսկի հստակ ճշգրտում:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս 4.2.2 ծանոթագրությունը):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

5.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Կրած պահանջների գծով պարտավորություն

Չմարված պահանջների վերջնական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով մի շարք ստանդարտ ակտուարային պահանջների նախագծման մեթոդներ:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Ընկերության անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Այս մեթոդները

Էքստրապոլացնում են վճարված և կրած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, (ներառյալ պահանջների գծով կարգավորման ծախսերը), նախորդ տարիներում դիտարկված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները: Պահանջների պատմական զարգացումը հիմնականում վերլուծվում է տվյալ տարվա համար, սակայն կարող է նաև վերլուծվել աշխարհագրական տարածքից ելնելով, ինչպես նաև ըստ նշանակալի ապահովագրական դասերի: Խոշոր պահանջները սովորաբար դիտարկվում են առանձին՝ կա՛մ պահուստավորվում գնահատողների ներկայացրած անվանական արժեքով, կա՛մ առանձին կանխատեսվում՝ հաշվի առնելով դրանց հետագա զարգացումը: Շատ դեպքերում բացահայտ ենթադրություններ չեն արվում պահանջների գնաճի ապագա դրույքաչափերի կամ վնասի գործակիցների վերաբերյալ: Փոխարենը, օգտագործվում են այն ենթադրությունները, որոնք ներառված են պահանջների զարգացման պատմական տվյալների մեջ, որոնց վրա հիմնված են կանխատեսումները: Լրացուցիչ որակական դատողություններ են օգտագործվում՝ գնահատելու համար, թե որքանով անցյալի միտումները չեն կարող կիրառվել ապագայում (օրինակ՝ արտացոլելու միանվագ իրադարձությունները, արտաքին կամ շուկայական գործոնների փոփոխությունները, ինչպիսիք են ապահովագրության նկատմամբ հասարակության վերաբերմունքը, տնտեսական պայմանները, պահանջների գնաճի մակարդակը, դատական որոշումները և օրենսդրությունը ինչպես նաև ներքին գործոններ, ինչպիսիք են պորտֆելի կազմը, քաղաքականության առանձնահատկությունները և պահանջների ընթացակարգերը) հասնելու պահանջների վերջնական գնահատված արժեքին, որը արդյունքի հավանականության կշռված ակնկալվող արժեքն է մի շարք հնարավոր արդյունքներից՝ ներառյալ բոլոր անորոշությունները:

Ենթադրությունների հավաստիության վրա ազդող այլ հիմնական հանգամանքները ներառում են տոկոսադրույքների տատանումները, մարման հետաձգումները և արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները:

Ձեռչման դրույքաչափեր

Ընկերությունը հաշվարկում է ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները՝ գեղջելով ակնկալվող ապագա դրամական հոսքերը ռիսկից ազատված դրույքաչափով: Ռիսկից ազատված դրույքաչափերը որոշվում են ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունների արժույթով բարձր իրացվելի սուվերեն արժեթղթերի եկամտաբերության հիման վրա:

Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում

Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումն այն փոխհատուցումն է, որը Ընկերությունը պահանջում է ապահովագրության պայմանագրերի խմբերի դրամական հոսքերի մեծության և ժամկետների անորոշություններով պայմանավորված ոչ ֆինանսական ռիսկը կրելու համար: Ռիսկի ճշգրտումն արտացոլում է այն գումարը, որը ապահովագրողը խելամիտ կերպով կվճարեր՝ վերացնելու անորոշությունը, որ ապագա դրամական հոսքերը կգերազանցեն ակնկալվող արժեքի գումարը:

Ընկերությունը գնահատել է ռիսկի ճշգրտումը 99% վստահության մակարդակով: Այս գնահատումը ներառում է ապագա դրամական հոսքերի հավանականության բաշխումը և ապագա դրամական հոսքերի ակնկալվող ներկա արժեքից բարձր լրացուցիչ գումարի չափի սահմանումը, որն անհրաժեշտ է վստահության նպատակային մակարդակը բավարարելու համար: Ավելին, Ընկերությունը ռիսկի ճշգրտման գնահատման ժամանակ հաշվի է առնում կապիտալի արժեքը:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները:

Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս ծանոթագրություն 24):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս ծանոթագրություն 27.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.2.8):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 22:

6 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Հաշիվներ բանկերում 187,665

Ընդամենը դրամական միջոցներ 187,665

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 146,873 հազար դրամ գումարով (78%) հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում:

Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

7 Ավանդներ բանկերում

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Ավանդներ բանկերում	1,361,899
Պարտքային կորուստների գծով պահուստ	(10,098)
Ընդամենը ավանդներ բանկերում	<u>1,351,801</u>

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 951,801 հազար դրամ գումարով (70%) բանկերում ավանդները կենտրոնացված են երեք բանկերում:

Ավանդները բանկերում ունեն 90 օրից ավել մարման ժամկետ:

Բանկերում ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ

2023թ.

Փուլ 1

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հուլիսի 25-ի դրությամբ

-

Պարտքային կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում

10,098

Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ

10,098

8 Ներդրումներ արժեթղթերում

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր

ՀՀ պետական պարտատոմսեր

609,663

Պարտքային կորուստների գծով պահուստ

(3,461)

Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր

606,202

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

2023

Փուլ 1

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հուլիսի 25-ի դրությամբ

-

Պարտքային կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում

3,461

Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ

3,461

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

ՀՀ պետական պարտատոմսեր	299,951
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	<u>299,951</u>

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

2023

Փուլ 1

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հուլիսի 25-ի դրությամբ	-
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	615
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>615</u>

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	9-12.5	2029-2047

9 Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ և պարտավորություններ

Թողարկված ապահովագրության և պահվող վերաապահովագրության պայմանագրերի պորտֆելների բաշխումը, որոնք գտնվում են ակտիվի դիրքում և պորտֆելների բաշխումը, որոնք գտնվում են պարտավորության դիրքում, ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ

	2023	
	Զուտ	
	Ակտիվներ	Պարտավորություններ
<i>Թողարկված ապահովագրության պայմանագրեր</i>		
Առողջության կամավոր ապահովագրություն	-	378,575
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	-	8,003
Գույքի ապահովագրություն	-	124,204
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	-	26,087
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	-	96,004
Աջակցության (ճանապարհորդության)ապահովագրություն	-	20,196
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	-	249,133
Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	37,136
Ընդամենը թողարկված ապահովագրության պայմանագրեր	-	939,338
<i>Պահվող վերաապահովագրության պայմանագրեր</i>		
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	-	28,025
Գույքի ապահովագրություն	-	10,562
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	-	15,932
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	-	7,224
Աջակցության (ճանապարհորդության)ապահովագրություն	(4,196)	-
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	-	20,925
Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	1,202
Ընդամենը պահվող վերաապահովագրության պայմանագրեր	(4,196)	83,870

Ընկերությունը վերաապահովագրող գործընկերների հետ փոխադարձ հաշվարկները կատարում է տարին ավարտելուց հետո՝ մինչև առաջին եռամսյակի ավարտը և պայմանավորված Ընկերության գործունեության կարճաժամկետայնությամբ՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերը հիմնականում գտնվում են պարտավորության դիրքում:

Ընկերությունը տարանջատում է տեղեկատվությունը՝ հիմնական պորտֆելների վերաբերյալ բացահայտումները առանձին ներկայացնելու նպատակով: Այս տարանջատումը սահմանվել է՝ հիմնվելով Ընկերության կառավարման ձևի վրա:

Թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով զուտ ակտիվի կամ պարտավորության փոխանցումը, որը ցույց է տալիս ապահովագրության յուրաքանչյուր պորտֆելի համար մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը և կրած պահանջների գծով պարտավորությունը, բացահայտված են ստորև ներկայացված աղյուսակներում:

Առողջության կամավոր ապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հատույթ	(356,773)	-	-	-	(356,773)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	20,916	1,004	333,658	(12,357)	343,221
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր</i>	-	-	211,049	-	211,049
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	20,916	-	-	-	20,916
<i>Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ</i>	-	1,004	-	-	1,004
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	122,609	(12,357)	110,252
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(335,857)	1,004	333,658	(12,357)	(13,552)
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	623,554	-	-	-	623,554
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(210,348)	-	(210,348)
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(21,079)	-	-	-	(21,079)
Ընդամենը դրամական հոսքեր	602,475	-	(210,348)	-	392,127
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	266,618	1,004	123,310	(12,357)	378,575

Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հասույթ	(41,452)	-	-	-	(41,452)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	444	-	4,258	-	4,702
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր</i>	-	-	2,438	-	2,438
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	444	-	-	-	444
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	1,820	-	1,820
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(41,008)	-	4,258	-	(36,750)
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	47,634	-	-	-	47,634
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(2,438)	-	(2,438)
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(443)	-	-	-	(443)
Ընդամենը դրամական հոսքեր	47,191	-	(2,438)	-	44,753
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,183	-	1,820	-	8,003

Գույքի ապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հասույթ	(59,106)	-	-	-	(59,106)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	15,413	-	19,497	(2,446)	32,464
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր</i>	-	-	23	-	23
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	15,413	-	-	-	15,413
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	19,474	(2,446)	17,028
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(43,693)	-	19,497	(2,446)	(26,642)
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	172,627	-	-	-	172,627
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(23)	-	(23)
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(21,935)	-	-	-	(21,935)
Ընդամենը դրամական հոսքեր	150,692	-	(23)	-	150,669
Ապահովագրական պայմանագրերի ապաճանաչում	177	-	-	-	177
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	107,176	-	19,474	(2,446)	124,204

Դժբախտ պատահարներից ապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հասույթ	(33,933)	-	-	-	(33,933)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	4,080	88	2,904	(1,768)	5,304
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր</i>	-	-	426	-	426
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	4,080	-	-	-	4,080
<i>Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ</i>	-	88	-	-	88
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	2,478	(1,768)	710
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(29,853)	88	2,904	(1,768)	(28,629)
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	61,198	-	-	-	61,198
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(426)	-	(426)
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(6,056)	-	-	-	(6,056)
Ընդամենը դրամական հոսքեր	55,142	-	(426)	-	54,716
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,289	88	2,478	(1,768)	26,087

Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հասույթ	(28,349)	-	-	-	(28,349)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	1,580	44	11,634	(1,046)	12,212
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր</i>	-	-	-	-	-
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	1,580	-	-	-	1,580
<i>Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ</i>	-	44	-	-	44
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	11,634	(1,046)	10,588
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(26,769)	44	11,634	(1,046)	(16,137)
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	112,304	-	-	-	112,304
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(1,686)	-	-	-	(1,686)
Ընդամենը դրամական հոսքեր	110,618	-	-	-	110,618
Ապահովագրական պայմանագրերի ապաճանաչում	1,523	-	-	-	1,523
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	85,372	44	11,634	(1,046)	96,004

Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հասույթ	(22,495)	-	-	-	(22,495)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	18,091	421	11,173	(712)	28,973
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր</i>	-	-	2,283	-	2,283
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	18,091	-	-	-	18,091
<i>Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ</i>	-	421	-	-	421
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	8,890	(712)	8,178
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(4,404)	421	11,173	(712)	6,478
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	37,175	-	-	-	37,175
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(2,283)	-	(2,283)
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(23,411)	-	-	-	(23,411)
Ընդամենը դրամական հոսքեր	13,764	-	(2,283)	-	11,481
Ապահովագրական պայմանագրերի ապաճանաչում	2,237	-	-	-	2,237
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,597	421	8,890	(712)	20,196

Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հասույթ	(79,729)	-	-	-	(79,729)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	57,265	5,648	55,402	(4,268)	114,047
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր</i>	-	-	16,498	-	16,498
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	57,265	-	-	-	57,265
<i>Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ</i>	-	5,648	-	-	5,648
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	38,904	(4,268)	34,636
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(22,464)	5,648	55,402	(4,268)	34,318
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	306,548	-	-	-	306,548
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(16,498)	-	(16,498)
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(75,293)	-	-	-	(75,293)
Ընդամենը դրամական հոսքեր	231,255	-	(16,498)	-	214,757
Ապահովագրական պայմանագրերի ապաճանաչում	58	-	-	-	58
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	208,849	5,648	38,904	(4,268)	249,133

*Օղանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության
ապահովագրություն ապահովագրություն*

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով պարտավորություններ		
	Առանց վնասի բաղադրիչ	Վնասի բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Ապահովագրական հատույթ	(10,538)	-	-	-	(10,538)
Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	782	-	-	-	782
<i>Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա</i>	782	-	-	-	782
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(9,756)	-	-	-	(9,756)
<i>Դրամական հոսքեր</i>					
Ստացված ապահովագրական վճարներ	47,674	-	-	-	47,674
Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր	(782)	-	-	-	(782)
Ընդամենը դրամական հոսքեր	46,892	-	-	-	46,892
Ապահովագրության պայմանագրերի գծով զուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	37,136	-	-	-	37,136

Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով զուտ ակտիվի կամ պարտավորության փոխանցումը, որը ցույց է տալիս վերաապահովագրության յուրաքանչյուր պորտֆելի համար մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը և կրած պահանջների գծով վերաապահովագրողներից փոխհատուցվող գումարները, բացահայտված են ստորև ներկայացված աղյուսակներում:

Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության վերաապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով փոխհատուցվող գումարներ		
	Առանց վնասի փոխհատուցման բաղադրիչ	Վնասի փոխհատուցման բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Վերաապահովագրավճարների բաշխում	(19,216)	-	-	-	(19,216)
Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերաապահովագրողին հատկացրած) գումարներ	(12,114)	-	3,853	-	(8,261)
Կրած պահանջներ և այլ ծախսեր գծով փոխհատուցված գումարներ	-	-	2,173	-	2,173
Վերաապահովագրության գծով գուտ միջնորդավճարների ամորտիզացիա	(12,114)	-	-	-	(12,114)
Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ	-	-	1,680	-	1,680
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(31,330)	-	3,853	-	(27,477)
<i>Դրամական հոսքեր</i>					
Վճարված վերաապահովագրական վճարներ և միջնորդավճարներ	1,625	-	-	-	1,625
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(2,173)	-	(2,173)
Ընդամենը դրամական հոսքեր	1,625	-	(2,173)	-	(548)
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(29,705)	-	1,680	-	(28,025)

Գույքի ապահովագրության վերաապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով փոխհատուցվող գումարներ		
	Առանց վնասի փոխհատուցման բաղադրիչ	Վնասի փոխհատուցման բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Վերաապահովագրավճարների բաշխում	(33,734)	-	-	-	(33,734)
Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերաապահովագրողին հատկացրած) գումարներ	(1,585)	-	17,403	(2,182)	13,636
<i>Վերաապահովագրության գծով գուտ միջնորդավճարների ամորտիզացիա</i>	<i>(1,541)</i>	-	-	-	<i>(1,541)</i>
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	<i>17,403</i>	<i>(2,182)</i>	<i>15,221</i>
<i>Փոխարժեքային տարբերության ազդեցություն</i>	<i>(44)</i>	-	-	-	<i>(44)</i>
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(35,319)	-	17,403	(2,182)	(20,098)
<i>Դրամական հոսքեր</i>					
Վճարված վերաապահովագրական վճարներ և միջնորդավճարներ	9,536	-	-	-	9,536
Ընդամենը դրամական հոսքեր	9,536	-	-	-	9,536
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(25,783)	-	17,403	(2,182)	(10,562)

Դժբախտ պատահարներից ապահովագրության վերապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով փոխհատուցվող գումարներ		
	Առանց վնասի փոխհատուցման բաղադրիչ	Վնասի փոխհատուցման բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Վերապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Վերապահովագրավճարների բաշխում	(19,925)	-	-	-	(19,925)
Վերապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերապահովագրողին հատկացրած) գումարներ	3,319	-	2,171	(1,497)	3,993
<i>Վերապահովագրության գծով գուտ միջնորդավճարների ամորտիզացիա</i>	<i>3,319</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>3,319</i>
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	<i>-</i>	<i>-</i>	<i>2,171</i>	<i>(1,497)</i>	<i>674</i>
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(16,606)	-	2,171	(1,497)	(15,932)
<i>Դրամական հոսքեր</i>					
Ընդամենը դրամական հոսքեր	-	-	-	-	-
Վերապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(16,606)	-	2,171	(1,497)	(15,932)

Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության վերաապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով փոխհատուցվող գումարներ		
	Առանց վնասի փոխհատուցման բաղադրիչ	Վնասի փոխհատուցման բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Վերաապահովագրավճարների բաշխում	(21,418)	-	-	-	(21,418)
Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերաապահովագրողին հատկացրած) գումարներ	653	-	11,535	(1,034)	11,154
Վերաապահովագրության գծով գուտ միջնորդավճարների ամորտիզացիա	722	-	-	-	722
Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ	-	-	11,535	(1,034)	10,501
Փոխարժեքային տարբերության ազդեցություն	(69)	-	-	-	(69)
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(20,765)	-	11,535	(1,034)	(10,264)
<i>Դրամական հոսքեր</i>					
Վճարված վերաապահովագրական վճարներ և միջնորդավճարներ	3,040	-	-	-	3,040
Ընդամենը դրամական հոսքեր	3,040	-	-	-	3,040
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(17,725)	-	11,535	(1,034)	(7,224)

Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրության վերաապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով փոխհատուցվող գումարներ		
	Առանց վնասի փոխհատուցման բաղադրիչ	Վնասի փոխհատուցման բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Վերաապահովագրության պայմանագրերի գծով զուտ ակտիվներ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Վերաապահովագրավճարների բաշխում	(453)	-	-	-	(453)
Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերաապահովագրողին հատկացրած) գումարներ	(43)	-	5,092	(400)	4,649
Կրած պահանջների գծով պարտավորությունների փոխհատուցման փոփոխություններ	-	-	5,092	(400)	4,692
Փոխարժեքային տարբերության ազդեցություն	(43)	-	-	-	(43)
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(496)	-	5,092	(400)	4,196
<i>Դրամական հոսքեր</i>					
Ընդամենը դրամական հոսքեր	-	-	-	-	-
Վերաապահովագրության պայմանագրերի գծով զուտ ակտիվներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(496)	-	5,092	(400)	4,196

Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության վերաապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով փոխհատուցվող գումարներ		
	Առանց վնասի փոխհատուցման բաղադրիչ	Վնասի փոխհատուցման բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկայարժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Վերաապահովագրավճարների բաշխում	(45,685)	-	-	-	(45,685)
Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերաապահովագրողին հատկացրած) գումարներ	(15,576)	-	43,728	(3,393)	24,759
<i>Կրած պահանջներ և այլ ծախսեր գծով փոխհատուցված գումարներ</i>	-	-	12,144	-	12,144
Վերաապահովագրության գծով գուտ միջնորդավճարների ամորտիզացիա	(15,576)	-	-	-	(15,576)
<i>Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ</i>	-	-	31,584	(3,393)	28,191
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(61,261)	-	43,728	(3,393)	(20,926)
<i>Դրամական հոսքեր</i>					
Վճարված վերաապահովագրական վճարներ և միջնորդավճարներ	12,145	-	-	-	12,145
Վճարված պահանջներ և այլ ծախսեր	-	-	(12,144)	-	(12,144)
Ընդամենը դրամական հոսքեր	12,145	-	(12,144)	-	1
Վերաապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(49,116)	-	31,584	(3,393)	(20,925)

Օղանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության
ապահովագրության վերապահովագրություն

Հազար ՀՀ դրամ

2023

	Մնացորդային ծածկույթի պարտավորություններ		Կրած պահանջների գծով փոխհատուցվող գումարներ		
	Առանց վնասի փոխ- հատուցման բաղադրիչ	Վնասի փոխ- հատուցման բաղադրիչ	Ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումներ	Ռիսկի ճշգրտում	Ընդամենը
Վերապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ հուլիս 25-ի դրությամբ	-	-	-	-	-
Վերապահովագրավճարների բաշխում	(9,080)	-	-	-	(9,080)
Վերապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերապահովա- գրողին հատկացրած) գումարներ	(233)	-	-	-	(233)
<i>Վերապահովագրության գծով գուտ միջնորդավճարների ամորտիզացիա</i>	<i>158</i>	-	-	-	<i>158</i>
<i>Փոխարժեքային տարբերության ազդեցություն</i>	<i>(391)</i>	-	-	-	<i>(391)</i>
Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում	(9,313)	-	-	-	(9,313)
<i>Դրամական հոսքեր</i>					
Վճարված վերապահովագրական վճարներ և միջնորդավճարներ	8,111	-	-	-	8,111
Ընդամենը դրամական հոսքեր	8,111	-	-	-	8,111
Վերապահովագրության պայմանագրերի գծով գուտ պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,202)	-	-	-	(1,202)

10 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Գրասենյակային գույք	Սարքա- վորումներ	Փոխադրա միջոցներ	Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման հրավումքի ձևով ակտիվներ	Ընդամենը
<i>Մկզբնական արժեք</i>							
2023թ. հունիսի 25-ի դրությամբ	-	-	-	-	-	-	-
Ավելացում	19,354	153,654	45,317	73,640	13,653	53,658	359,276
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,354	153,654	45,317	73,640	13,653	53,658	359,276
<i>Կուտակված մաշվածություն</i>							
2023թ. հունիսի 25-ի դրությամբ	-	-	-	-	-	-	-
Ժամանակաշրջանի ծախս	276	1,864	2,044	-	674	3,532	8,390
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	276	1,864	2,044	-	674	3,532	8,390
<i>Հաշվեկշիռային արժեք</i>							
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,078	151,790	43,273	73,640	12,979	50,126	350,886

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել երկու գրասենյակների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրածեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր վարձակալության գծով պարտավորությունը այլ պարտավորություններում (տե՛ս ծանոթագրություն 12):

Շահագործման համար մատչելի չհանդիսացող ակտիվներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված՝ շահագործման համար դեռևս մատչելի չհանդիսացող ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 116,213 հազար դրամ:

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

11 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	4,253
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	<u>4,253</u>
Կանխավճարներ	82,723
Այլ	1,771
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	<u>84,494</u>
Ընդամենը այլ ակտիվներ	<u><u>88,747</u></u>

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն բացահայտվում այս աղյուսակում:

12 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Կրեդիտորական պարտքեր	33,469
Վարձակալության գծով պարտավորություններ	50,030
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	70,799
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	<u>154,298</u>
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	29,610
Ստացված կանխավճարներ	39,042
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	<u>68,652</u>
Ընդամենը այլ պարտավորություններ	<u><u>222,950</u></u>

Վարձակալության գծով պարտավորություններ

Ընկերությունը վարձակալության պայմանագրեր է կնքել երկու գրասենյակների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրածեք ակտիվների վարձակալությունների յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տե՛ս ծանոթագրություն 10):

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Հուլիսի 25-ի դրությամբ	-
Ավելացում	51,664
Տոկոսի կուտակում	943
Վճարումներ	(2,577)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>50,030</u>

2023թ. ՖՅՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 12.1%:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով զեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 26-ում:

13 Բաժնետիրական կապիտալ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 2,000,000 հազ. դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 2,000,000 հատ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միանձնյա բաժնետերերն է հանդիսանում «Ինթելլիջենք մենեջմենթ» ՍՊԸ-ն:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության:

14 Ապահովագրական հասույթ

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի
31-ին ավարտված ժամանակաշրջան

	Ապահովագրական հասույթ	Վերաապահովագրության վճարների բաշխում	Զուտ
Առողջության կամավոր ապահովագրություն	356,773	-	356,773
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	41,452	(19,216)	22,236
Գույքի ապահովագրություն	59,106	(33,734)	25,372
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	33,933	(19,925)	14,008
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	28,349	(21,418)	6,931
Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն	22,495	(453)	22,042
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	79,729	(45,685)	34,044
Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	10,538	(9,080)	1,458
Ընդամենը	632,375	(149,511)	482,864

15 Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջան

	Կրած պահանջներ և այլ ծախսեր	Ապահովագրու- թյան ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա	Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ և այդ վնասների հակադարձումներ	Կրած պահանջների գծով պարտավո- րության փոփոխություն	Ապահովա- գրական ծառայություն- ների գծով ծախսեր
Առողջության կամավոր ապահովագրություն	211,049	20,916	1,004	110,252	343,221
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	2,438	444	-	1,820	4,702
Գույքի ապահովագրություն	23	15,413	-	17,028	32,464
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	426	4,080	88	710	5,304
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	-	1,580	44	10,588	12,212
Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն	2,283	18,091	421	8,178	28,973
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	16,498	57,265	5,648	34,636	114,047
Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն ապահովագրություն	-	782	-	-	782
Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր	232,717	118,571	7,205	183,212	541,705

16 Վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարներ

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջան

	Վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարներ		Վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարներ	
	Վերաապահովագրողի մասը կրած պահանջներում և այլ ծախսերում	Վերաապահովագրողի մասը կրած պահանջներում և այլ ծախսերում	Վերաապահովագրողի մասը կրած պահանջներում և այլ ծախսերում	Վերաապահովագրողի կողմից փոխհատուցված/ (վերաապահովագրողին հատկացրած) գումարներ
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	2,173	(12,114)	1,680	(8,261)
Գույքի ապահովագրություն	-	(1,541)	15,221	13,680
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	-	3,319	674	3,993
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	-	722	10,501	11,223
Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն	-	-	4,692	4,692
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	12,144	(15,576)	28,191	24,759
Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	158	-	158
Ընդամենը վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարներ	14,317	(25,032)	60,959	50,244

17 Տոկոսային եկամուտ և ծախս

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված
ժամանակաշրջան

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտ բանկերում ավանդներից	51,048
Տոկոսային եկամուտ ներդրումային արժեթղթերից	18,681
Ընդամենը տոկոսային եկամուտ	69,729

Վարձակալության գծով տոկոսային ծախս 943

Ընդամենը տոկոսային ծախս 943

18 Ֆինանսական ակտիվների պարտքային կորուստների գծով ծախս

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջան

	Օանոթ.	Փուլ 1	Ընդամենը
Ավանդներ բանկերում	7	10,098	10,098
Ներդրումներ արժեթղթերում	8	4,076	4,076
Ընդամենը արժեզրկման ծախս		14,174	14,174

19 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված
ժամանակաշրջան

Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	146,943
Պարգևավճարներ և հավելյալ վճարներ	164,395
Արձակուրդային վճարներ	18,655
Անձնակազմի գծով այլ ծախսեր	6,817
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	336,810

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վաճառքի և պայմանագրերի կնքման բաժնի աշխատակիցներին վճարված 109,064 հազար դրամ աշխատավարձը ներառված է ապահովագրական ծառայությունների գծով ծախսերում (ծանոթագրություն 15):

20 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված
Ժամանակաշրջան

Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	7,945
Գովազդի ծախսեր	5,480
Գործուղման ծախսեր	2,010
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	1,774
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	4,470
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	18,008
Ներկայացուցչական ծախսեր	6,377
Գրասենյակային ծախսեր	6,835
Բանկային ծառայությունների ծախսեր	383
Անդամավճարներ	1,060
Բարեգործություն	2,000
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	6,664
Այլ ծախսեր	1,894
Ընդամենը այլ ծախսեր	64,900

21 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազար ՀՀ դրամ

2023թ. հուլիսի 25-ից մինչև
2023թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված
Ժամանակաշրջան

Հետաձգված հարկ	(67,275)
Ընդամենը շահութահարկի գծով փոխհատուցում	(67,275)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18%: ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով փոխհատուցման և հաշվապահական վնասի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2023թ. հուլիսի 25-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջան	Արդյունավետ դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը	(358,952)	
Շահութահարկ	(64,611)	18
Չնվազեցվող ծախսեր	(2,046)	1
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	(618)	-
Ընդամենը շահութահարկի գծով փոխհատուցում	(67,275)	19

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	Այլ					2023
	25 հուլիսի 2023	Շահույթում կամ վնասում ճանաչված	համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավոր- ություն
Դրամական միջոցներ	-	(338)	-	(338)	-	(338)
Ավանդներ բանկերում	-	(634)	-	(634)	-	(634)
Ներդրումներ արժեթղթերում	-	734	(404)	330	330	-
Ապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ	-	(4,462)	-	(4,462)	-	(4,462)
Վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ	-	(9,461)	-	(9,461)	-	(9,461)
Հիմնական միջոցներ	-	(9,023)	-	(9,023)	-	(9,023)
Այլ ակտիվներ	-	(152)	-	(152)	-	(152)
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	-	11,452	-	11,452	11,452	-
Այլ պարտավորություններ	-	22,495	-	22,495	22,495	-
Փոխանցվող հարկային վնաս	-	56,664	-	56,664	56,664	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	-	67,275	(404)	66,871	90,941	(24,070)

22 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտավորումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Այնուամենայնիվ, 2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցները ապահովագրված են: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության նշանակալից բաժնետերեր են հանդիսանում Լ. Ալթունյանը և Ա. Մելիքսեթյանը՝ հավասարաչափ բաժնեմասերով, որոնց անուղղակի պատկանում է ձայների իրավունք տվող բաժնետոմսերի 100%-ը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

2023

	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</i>		
<i>Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ</i>		
Հուլիսի 25-ի դրությամբ	-	-
Ավելացում	12,484	426
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,484	426

*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ
Ֆինանսական արդյունքի մասին
հաշվետվություն*

Ապահովագրական հասույթ	2,225	55
-----------------------	-------	----

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

2023

Աշխատավարձ և պարգևատրումներ	183,730
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	183,730

24 Իրական արժեքի չափումը

Ընկերության ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը չզննանշվող իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքով չափվող արժեթղթերի համար:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերության ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ընկերությունն անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

24.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	31 դեկտեմբերի 2023թ.	
				Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ	-	187,665	-	187,665	187,665
Ավանդներ բանկերում	-	1,351,801	-	1,351,801	1,351,801
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	610,103	-	610,103	606,202
Այլ ակտիվներ	-	4,253	-	4,253	4,253
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Այլ պարտավորություններ	-	154,298	-	154,298	154,298

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է իրենց հաշվեկշռային արժեքին

Այն ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք իրացվելի են կամ ունեն կարճ ժամկետայնություն (երեք ամսից պակաս), ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև առանց որոշակի մարման ժամկետ ունեցող ցպահանջ ավանդների և խնայողական հաշիվների նկատմամբ:

Տիրապետող դրույքաչափով ֆինանսական գործիքներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է՝ համեմատելով դրանց առաջին անգամ ճանաչման պահի

շուկայական տոկոսադրույքները համանման ֆինանսական գործիքների ընթացիկ շուկայական դրույքաչափերի հետ: Ֆիքսված տոկոսադրույքով ավանդների գնահատված իրական արժեքը հիմնված է գեղջված դրամական հոսքերի վրա՝ օգտագործելով նմանատիպ վարկային ռիսկով և մարման ժամկետով պարտքերի համար դրամական շուկայի գերակշռող տոկոսադրույքները: Այդ գործիքների իրական արժեքը չի տարբերվում հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքներից:

24.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	<u>Մակարդակ 1</u>	<u>Մակարդակ 2</u>	<u>Մակարդակ 3</u>	<u>Ընդամենը</u>
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	-	299,951	-	299,951
Ընդամենը	-	299,951	-	299,951

25 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել գուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնք ներկայացված են գուտ արժեքով կամ կհաշվանցվեն համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի:

26 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները՝ ըստ սպասվելիք մարման ժամկետների:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ	187,665	-	187,665	-	-	-	187,665
Ավանդներ բանկերում	-	1,351,801	1,351,801	-	-	-	1,351,801
Ներդրումներ արժեթղթերում	-	606,202	606,202	117,736	182,215	299,951	906,153
Այլ ակտիվներ	4,253	-	4,253	-	-	-	4,253
	<u>191,918</u>	<u>1,958,003</u>	<u>2,149,921</u>	<u>117,736</u>	<u>182,215</u>	<u>299,951</u>	<u>2,449,872</u>
<i>Պարտավորություններ</i>							
Վարձակալության գծով պարտավորություններ	24	18,512	18,536	31,494	-	31,494	50,030
Այլ պարտավորություններ	104,268	-	104,268	-	-	-	104,268
	<u>104,292</u>	<u>18,512</u>	<u>122,804</u>	<u>31,494</u>	<u>-</u>	<u>31,494</u>	<u>154,298</u>
Զուտ Դիրք	<u>87,626</u>	<u>1,939,491</u>	<u>2,027,117</u>	<u>86,242</u>	<u>182,215</u>	<u>268,457</u>	<u>2,295,574</u>
Կուտակված ճեղքվածք	<u>87,626</u>	<u>2,027,117</u>		<u>2,113,359</u>	<u>2,295,574</u>		

27 Ապահովագրական և ֆինանսական ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ռիսկերի բազմազանությունը և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Հետևաբար, Ընկերության նպատակն է հասնել ռիսկի և եկամտաբերության միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական գործունեության վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Ռիսկի կարևորագույն տեսակներն են են ապահովագրական և ֆինանսական ռիսկերը: Վերջինս ներառում է պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության

փոփոխությունները: Դրանք կառավարվում են Ընկերության կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրինության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Ընկերության Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Տնօրինություն

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է գործընթացների ներդրման և իրականացման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ, որպեսզի ապահովեն կառավարման անկախ գործընթացը:

27.1 Ապահովագրական ռիսկ

Ապահովագրության պայմանագրերի գծով Ընկերության հիմնական ռիսկն այն է, որ փաստացի պահանջները և հատուցումները կամ դրանց հետ կապված ժամկետները տարբերվեն սպասված արդյունքներից: Վերոհիշյալը կապված է պահանջների հաճախականության, դրանց խստության մակարդակի, փաստացի վճարված հատուցումների և երկարաժամկետ պահանջների հետագա զարգացման հետ: Այդ պատճառով, Ընկերության նպատակն է ապահովել բավարար պահուստներ այդ պարտավորությունները ծածկելու համար:

Վերը նշված ռիսկի մակարդակը զսպվում է՝ բազմազանեցնելով ապահովագրության պայմանագրերի լայն պորտֆելը: Ռիսկերի փոփոխականությունը նվազեցվում է նաև անդերապիսինգի քաղաքականության պատշաճ ընտրության և իրականացման միջոցով, ինչպես նաև վերաապահովագրության պայմանագրերի կիրառմամբ:

Ռիսկերի զսպման քաղաքականության շրջանակներում Ընկերությունը իրականացնում է ինչպես ֆակուլտատիվ, այնպես էլ օբլիգատոր վերաապահովագրություն: Վերաապահովագրությունը իրականացվում է համամասնական սկզբունքով: Համամասնական վերաապահովագրության հիմնական մասը կազմում է քվոտային վերաապահովագրությունը, որն իրականացվում է Ընկերության գործունեության որոշ դասերի գծով ռիսկի ընդհանուր ենթարկվածությունը նվազեցնելու նպատակով:

Վերաապահովագրողներից վերականգնվող գումարները գնահատվում են ըստ չկարգավորված պահանջների պահուստի և համապատասխանում են վերաապահովագրության պայմանագրերին: Չնայած նրան, որ Ընկերությունն ունի վերաապահովագրության պայմանագրեր, այն չի ազատվում ապահովադիրների նկատմամբ ուղղակի պարտավորություններից և հետևաբար փոխանցված ապահովագրության հետ կապված գոյություն ունի նաև պարտքային ռիսկ, կապված վերաապահովագրողի կողմից վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտականությունների չկատարման հետ: Ընկերության կողմից վերաապահովագրության ձեռքբերումը այնպես է բազմազանեցված, որպեսզի Ընկերությունը կախված չլինի մեկ վերաապահովագրողից, իսկ Ընկերության գործառնությունները կախված չլինին են վերաապահովագրության մեկ պայմանագրից:

27.1.1. Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրեր

Բացի արդեն նշված ռիսկերի զսպման վերոնշյալ քաղաքականությունից, ռիսկին ենթարկվածությունը նվազեցնելու համար Ընկերությունը կիրառում է նաև պահանջների մանրամասն ուսումնասիրման քաղաքականություն, գնահատելու համար բոլոր նոր և գործող պահանջները, պարբերաբար դիտարկում է պահանջների կարգավորման ընթացակարգերը և հաճախ ուսումնասիրություններ է իրականացնում բացահայտելու համար հնարավոր կեղծ հայտերը: Բացի այդ, Ընկերությունը կիրառում է պահանջների ակտիվ կառավարման և արագ կարգավորման քաղաքականություն, նվազեցնելու համար ապագա անկանխատեսելի զարգացումների հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության վրա: Գնաձի ռիսկը զսպվում է ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները գնահատելիս գնաձը հաշվի առնելով:

Անդերապրիմի և վերաապահովագրության ռազմավարությունների օգտագործման նպատակն է նվազեցնել Ընկերության ենթարկվածությունը ռիսկից՝ հիմնվելով Ընկերության ղեկավարության կողմից որոշված ռիսկի ընդունելի չափերի վրա: Սրա հիմնական նպատակն է հանդիսանում մեկ դեպքի ազդեցությունը սահմանափակել բաժնետիրական կապիտալի 10%-ի չափով՝ հաշվի առնելով վերաապահովագրությունը: Խորհուրդը կարող է ավելացնել կամ նվազեցնել ընդունելի սահմանաչափերը՝ կախված շուկայական պայմաններից և այլ գործոններից:

Հիմնական ենթադրություններ

Ընկերության պարտավորությունների գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունը այն է, թե արդյո՞ք Ընկերության ապագա պահանջների զարգացումը նման կլինի անցյալ պահանջների զարգացումների փորձին: Դրանք ներառում են ենթադրություններ, կապված պահանջների գծով միջին ծախսի, պահանջների կարգավորման ծախսերի, սպասվող վնասաբերության ցուցանիշների և յուրաքանչյուր տարում պատահարների գծով պահանջների քանակի հետ: Օգտագործվում են լրացուցիչ որակական դատողություններ՝ գնահատելու համար, թե որ տենդենցները կիրառելի չեն ապագայի համար, օրինակ՝ հատուկներ դեպքեր, փոփոխություններ շուկայական պայմաններում, ինչպես օրինակ՝ հանրության վերաբերմունքի փոփոխությունը պահանջների ներկայացման հանդեպ, տնտեսական իրավիճակի փոփոխությունը, ինչպես նաև ներքին գործոններ, ինչպիսիք են պորտֆելի կառուցվածքը, պոլիսների պայմանները, պահանջների կարգավորման ընթացակարգերը:

Հետագա դատողությունները օգտագործվում են որոշելու համար, թե որքանով կարող են արտաքին գործոնները, ինչպիսիք են դատական վճիռները, օրենսդրական դաշտը, ազդել գնահատումների վրա:

Ենթադրությունների վստահելիության վրա ազդող այլ կարևոր հանգամանքները ներառում են տոկոսադրույքները, վճարման ժամկետների երկարաձգումները և փոփոխությունները արտարժույթի փոխարժեքներում:

Այնուամենայնիվ, կապված ՀՀ-ում համեմատաբար նոր ապահովագրական շուկայի հետ, դժվար է կանխատեսել որևէ պահանջի հավանական արդյունքը և ներկայացված պահանջների վերջնական արժեքը: Վնասի վերջնական արժեքի վրա ազդող գործոններից շատերի ազդեցությունը դժվար է որոշել: Այդ պատճառով, Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է վիճակագրական տվյալները, շուկայական փոփոխությունները և այլ գործոններ, պահուստների ավելի զգուշավոր գնահատման համար:

Զգայունության վերլուծություն

Ապահովագրական պահանջների պահուստները զգայուն են վերոնշյալ հիմնական ենթադրությունների նկատմամբ: Որոշ ենթադրությունների համար հնարավոր չի եղել որոշել քանակական զգայունությունը, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները կամ գնահատման գործընթացում անորոշությունները:

Ստորև ներկայացված վերլուծությունը իրականացված է հիմնական ենթադրություններում հնարավոր փոփոխությունների համար, այլ ենթադրությունները անփոփոխ լինելու պայմաններում, և ցույց է տալիս ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա: Ենթադրությունների փոխկապակցվածությունը զգալի ազդեցություն ունի պահանջների գծով պարտավորությունների վերջնական արժեքը որոշելու վրա, բայց ենթադրությունների փոփոխությունների ազդեցությունը ցույց տալու համար, ենթադրությունները փոփոխվում են անհատական հիմքով: Պետք է նշել, որ այս ենթադրությունների փոփոխությունները գծային չեն:

Հազար ՀՀ դրամ

2023

	Փոփոխություն ենթադրություններում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	
		Համախառն վերաապահովագրությունից	Զուտ վերաապահովագրությունից
Սպասվող վնասաբերության ցուցանիշ	+5	(156,090)	(93,906)
	-5	156,090	93,906
Մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության ազդեցություն	+1	4,551	2,817
	-1	(4,551)	(2,817)

Պահանջների զարգացման աղյուսակ

ՖՀՄՍ 17-ի պահանջներին համապատասխան, հատուցումների պահուստներ ձևավորելիս Ընկերությունը հաշվի է առնում ապագա իրադարձությունների հավանականությունը և մեծությունը, որոնք կլինեն սպասվածից ավելի անբարենպաստ, ինչը արտացոլվում է ռիսկի ճշգրտման մեջ: Ընդհանուր առմամբ, պահանջի կարգավորման վերջնական արժեքի հետ կապված անորոշությունն ամենամեծն է, երբ պահանջը գտնվում է զարգացման վաղ փուլերում: Պահանջների զարգացմանը զուգընթաց, պահանջի վերջնական արժեքը դառնում է ավելի որոշակի:

Ընկերությունը չունի բավարար պատմություն պահանջների զարգացման աղյուսակ բացահայտելու համար:

27.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի, ակտիվ դիրքով թողարկված ապահովագրության պայմանագրի կամ պահվող վերաապահովագրության պայմանագրի մի կողմը կարող է կորուստներ պատճառել մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով:

Ընկերության պարտքային ռիսկի ենթարկվածությունը մեղմելու համար գործում են հետևյալ քաղաքականությունները և ընթացակարգերը:

Ընկերությունն ունի պարտքային ռիսկի քաղաքականություն, որը գնահատում և սահմանում է, թե որն է համարվում Ընկերության համար պարտքային ռիսկ: Քաղաքականության հետ համապատասխանությունը վերահսկվում է, և բացահայտումների և խախտումների մասին զեկուցվում է Ընկերության ղեկավարությանը: Քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայվում է ռիսկային միջավայրի փոփոխությունների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Ֆինանսական գործիքների հետ կապված պարտքային ռիսկը վերահսկվում է Ընկերության ներդրումային թիմի կողմից: Նրանց պարտականությունն է վերանայել և կառավարել

պարտքային ռիսկը, ներառյալ բնապահպանական ռիսկը բոլոր գործընկերների համար: Ընկերությունը կառավարում և վերահսկում է պարտքային ռիսկը՝ սահմանելով ռիսկի սահմանաչափեր, որոնք նա պատրաստ է ընդունել առանձին գործընկերների համար և ըստ աշխարհագրական և արդյունաբերական կենտրոնացման, և վերահսկելով ռիսկերը՝ համաձայն այդ սահմանաչափերի: Ընկերության քաղաքականությունն է ներդրումներ կատարել բարձրորակ ֆինանսական գործիքներում, որոնք ունեն պարտազանցման ցածր ռիսկ: Պարտքային ռիսկի զգալի աճի դեպքում քաղաքականությունը թելադրում է, որ գործիքը պետք է վաճառվի, իսկ հասույթը վերաներդրվի բարձրորակ գործիքներում:

Վերապահովագրությունը կատարվում է այն գործընկերների հետ, որոնք ունեն բարձր վարկային վարկանիշ և ռիսկերի կենտրոնացումը մեղմվում է հետևելով գործընկերների առավելագույն սահմանաչափերի սահմանման քաղաքականությանը, որը ամեն տարի սահմանվում է խորհրդի կողմից և ենթակա է կանոնավոր վերանայման: Վերապահովագրողների վարկունակությունը դիտարկվում է տարեկան կտրվածքով՝ վերանայելով նրանց ֆինանսական կայունությունը մինչև որևէ պայմանագրի ավարտը:

Հաճախորդների՝ ապահովագրավճարների չվճարման արդյունքում առաձայցած մնացորդների պարտքային ռիսկը պահպանվում է միայն պայմանագրում նշված արտոնյալ ժամանակահատվածի ընթացքում: Միջնորդների վճարվող միջնորդավճարները հաշվանցվում են ստացվելիք գումարների հետ՝ պարտազանցման ռիսկը նվազեցնելու համար:

27.2.1 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություններ

Ընկերությունը շարունակաբար վերահսկում է այն ակտիվները, որոնք ենթակա են ակնկալվող պարտքային կորուստների: Որոշելու համար, արդյոք գործիքը կամ գործիքների պորտֆելը ենթակա է 12-ամսյա ԱՊԿ-ի թե գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ԱՊԿ-ի, Ընկերությունը գնահատում է, արդյոք տեղի է ունեցել պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո:

Ընկերությունը համարում է, որ պարտքային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Ընկերությունը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետևաբար, պարտքային առումով արժեզրկված՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են: Ընկերությունը կարող է նաև գործիքը համարել պարտազանցված, երբ ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ Ընկերությունը դժվար թե ստանա չմարված պայմանագրային գումարները ամբողջությամբ: Նման դեպքերում Ընկերությունը ճանաչում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ԱՊԿ:

Ընկերությունը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր պարտազանցման հավանականությունը 12-ամսյա ԱՊԿ հաշվարկելու նպատակով: Համաձայն ներդրումային քաղաքականության՝ ձեռք բերված նոր գործիքների համար պարտազանցման հավանականությունը սովորաբար որոշվում է որպես նվազագույն, իսկ պարտազանցման դեպքում ակնկալվող վնասի գործակիցը ենթադրվում է 100%: Հազվագյուտ դեպքերում, երբ պահանջվում է հաշվարկել գործողության ամբողջ ժամանակահատվածի ԱՊԿ, պարտազանցման հավանականությունը գնահատվում է տնտեսական սցենարների հիման վրա:

Տարվա ընթացքում ֆինանսական ակտիվների գծով պարտքային ռիսկի կամ պարտազանցման էական աճ չի գրանցվել: Ոչ մի գրավ չի պահվում որպես երաշխիք որևէ ժամկետանց կամ արժեզրկված ակտիվների դիմաց:

27.2.2 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Ստորև ներկայացված աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն Ընկերության պարտքային ռիսկի չափի վերաբերյալ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ դասակարգելով ակտիվները համաձայն գործընկեր կողմի վարկանիշների՝ ըստ միջազգային վարկանշային գործակալությունների:

Հազար ՀՀ դրամ

	Ոչ		Չվարկանշված	Ընդամենը
	Ներդրումային կատեգորիա	ներդրումային կատեգորիա		
Դրամական միջոցներ	115,465	-	72,200	187,665
Ավանդներ բանկերում	1,044,541	-	307,260	1,351,801
Ներդրումներ արժեթղթերում	906,153	-	-	906,153
Այլ ակտիվներ	-	-	4,253	4,253
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,066,159	-	383,713	2,449,872

27.2.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և գսպողական քաղաքականություն

Ընկերությունն ունի պարտքային ռիսկի քաղաքականություն, որը գնահատում և սահմանում է, թե որն է համարվում Ընկերության համար պարտքային ռիսկ: Քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայվում է ռիսկային միջավայրի փոփոխությունների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Վերաապահովագրությունն օգտագործվում է ապահովագրական ռիսկը կառավարելու նպատակով: Այնուամենայնիվ, սա չի ազատում Ընկերությանը իր հիմնական ապահովագրային պարտավորությունից: Եթե վերաապահովագրողը որևէ պատճառով չի կատարում պահանջի վճարում, ապա Ընկերությունը պարտավորվում է վճարել ապահովադիրին: Վերաապահովագրությունը կատարվում է այն գործընկեր կողմերի հետ, որոնք ունեն դրական վարկային գնահատական, իսկ ռիսկի սահմանաչափից հնարավոր է խուսափել, հետևելով գործընկեր կողմերի սահմանափակումներին վերաբերող քաղաքականության ուղեցույցին, որը սահմանվում է ամեն տարի Խորհրդի կողմից և ենթակա է կանոնավոր վերանայման: Վերաապահովագրողների վարկունակությունը հաշվի է առնվում տարեկան կտրվածքով վերանայելով ֆինանսական կայունությունը՝ պայմանագիրը վերջնական տեսքի բերելուց առաջ:

27.3 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է 3 տեսակի ռիսկ՝ տոկոսադրույքի ռիսկ, արտարժույթի ռիսկ և գնային ռիսկ:

Ընկերության շուկայական ռիսկի քաղաքականությունը սահմանում է, թե ինչպես կարելի է գնահատել և որոշել, թե որն է շուկայական ռիսկ Ընկերության համար: Քաղաքականության հետ համապատասխանությունը վերահսկվում է, և ռիսկերի և խախտումների մասին տեղեկատվությունը ներկայացվում է Ընկերության ռիսկերի կոմիտեին: Քաղաքականությունը պարբերաբար վերանայվում է համապատասխանության և ռիսկային միջավայրի փոփոխության տեսանկյունից:

Ակտիվների բաշխման և պորտֆելի սահմանաչափի կառուցվածքի համար հաստատվում են ուղեցույցեր՝ ապահովելու համար, որ ակտիվները ծածկում են ապահովադիրների հատուկ պարտավորությունները, և որ ակտիվներն ապահովում են Ընկերության պայմանագրային պահանջները բավարարելու համար անհրաժեշտ եկամուտն ու օգուտները:

27.3.1 Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների, ապահովագրության պայմանագրերի կամ վերաապահովագրության պայմանագրերի ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական արժեքների փոփոխության արդյունքում:

Ֆինանսական ակտիվների և ապահովագրության պայմանագրերի միջև ուղղակի պայմանագրային կապ չկա: Այնուամենայնիվ, Ընկերության տոկոսադրույքի ռիսկի քաղաքականությունը պահանջում է, որ զուտ տոկոսադրույքի ռիսկի չափը կառավարվի՝ պահպանելով ֆիքսված և փոփոխական տոկոսադրույքով գործիքների համապատասխան համադրություն՝ ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններն ապահովելու համար: Քաղաքականությունը նաև պահանջում է, որ կառավարվեն տոկոսակիր ֆինանսական ակտիվների մարման ժամկետները:

27.3.2 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների, ապահովագրության գծով ակտիվների և պարտավորությունների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային դիրքերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+5	(2,175)
ԱՄՆ դոլար	-5	2,175

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2023թ.

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ	150,011	37,654	187,665
Ավանդներ բանկերում	1,269,542	82,259	1,351,801
Ներդրումներ արժեթղթերում	906,153	-	906,153
Վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ	4,196	-	4,196
Այլ ակտիվներ	4,253	-	4,253
	<u>2,334,155</u>	<u>119,913</u>	<u>2,454,068</u>
<i>Պարտավորություններ</i>			
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	792,875	146,463	939,338
Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	66,925	16,945	83,870
Այլ պարտավորություններ	154,298	-	154,298
Ընդամենը	<u>1,014,098</u>	<u>163,408</u>	<u>1,177,506</u>
Զուտ դիրք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,320,057</u>	<u>(43,495)</u>	<u>1,276,562</u>

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև SՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

27.3.3 Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆինանսական գործիքների կամ ապահովագրության պայմանագրերի գծով ակտիվների և/կամ պարտավորությունների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական արժեքների փոփոխության արդյունքում (բացառությամբ նրանց, որոնք առաջացել են տոկոսադրույքի կամ արտարժույթի ռիսկերի հետևանքով)՝ անկախ նրանից՝ այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ պայմանագրին հատուկ գործոններով, թե շուկայում վաճառվող բոլոր նմանատիպ պայմանագրերի կամ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով:

Ընկերության գնային ռիսկի ենթարկվածությունը վերաբերում է այն ֆինանսական ակտիվներին և ֆինանսական պարտավորություններին, որոնց արժեքը կտատանվի շուկայական արժեքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը որևէ մասնակցային պայմանագրեր չունի: Հետևաբար, ապահովագրության կամ վերաապահովագրության պայմանագրեր, որոնք ենթարկվում են գնային ռիսկի, առկա չեն:

Ընկերության քաղաքականությունը գնային ռիսկերի հետ կապված պահանջում է կառավարել այդ ռիսկերը՝ սահմանելով և վերահսկելով ներդրումային նպատակներն ու սահմանները, դիվերսիֆիկացման պլանները ու անհատական և ընդհանուր բաժնային գործիքների սահմանափակումները:

Ընկերությունը չունի գնային ռիսկի էական կենտրոնացում:

27.4 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավվել ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ և կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Ընկերությունն օգտվել է ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»-ի 132 հոդվածի բ կետի i. մասից՝ ՖՀՄՍ 7-ի 39-րդ պարագրաֆի «ա» կետով պահանջվող մարման վերլուծության փոխարեն բացահայտելով տեղեկատվություն ճանաչված ապահովագրական և վերաապահովագրական պարտավորություններից առաջացող զուտ դրամական արտահոսքերի գնահատված ժամկետների վերաբերյալ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ապահովագրական վճարի բաշխման մոտեցման շրջանակում գնահատված մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունները դուրս են մնացել այս վերլուծությունից:

	Մինչև 1 տարի	1-ից 2 տարի	2 տարի և ավել	Ընդամենը	Ընդամենը Հաշվեկշռային
<i>Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ</i>					
Առողջության կամավոր ապահովագրություն	110,953	-	-	110,953	110,953
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	1,718	159	-	1,877	1,820
Գույքի ապահովագրություն	16,878	234	-	17,112	17,028
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	710	-	-	710	710
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	9,991	930	-	10,921	10,588
Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն	8,178	-	-	8,178	8,178
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	32,658	3,078	-	35,736	34,636
Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	-	-	-	-
Ընդամենը	181,086	4,401	-	185,487	183,913
<i>Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ</i>					
Առողջության կամավոր ապահովագրություն	-	-	-	-	-
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	1,585	147	-	1,732	1,680
Գույքի ապահովագրություն	15,142	123	-	15,265	15,221
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	674	-	-	674	674
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	9,910	919	-	10,829	10,501
Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրություն	4,692	-	-	4,692	4,692
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	26,621	2,445	-	29,066	28,191
Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	-	-	-	-
Ընդամենը	58,624	3,634	-	62,258	60,959

27.5 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Հնկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ ապահովագրական, պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Հնկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Հնկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Հնկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Հաշվետվությունները ներկայացվում են Խորհրդին:

28 Կապիտալի համարժեքություն

Հնկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Հնկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Հնկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Հնկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Հնկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Հնկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Հնկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը,

կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Ապահովագրական ընկերության համար կապիտալի համարժեքության նորմատիվը հաշվարկվում է ընդհանուր կապիտալի և պահանջվող կապիտալի մեծության հարաբերությամբ:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Պահանջվող կապիտալի մեծությունը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և պահանջվող կապիտալի մեծության հանրագումարի միջև սահմանային հարաբերակցությունը սահմանվում է 100%:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալը, պահանջվող կապիտալի մեծությունը և կապիտալի համարժեքության դրույթաչափի հաշվարկը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	<u>Աուդիտի չենթարկված</u> <u>31 դեկտեմբերի 2023թ.</u>
Հազար ՀՀ դրամ	
Հիմնական կապիտալ	1,839,386
Լրացուցիչ կապիտալ	1,394
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	1,840,780
Պահանջվող կապիտալի մեծություն	1,156,689
Կապիտալի համարժեքության նորմատիվ	159%

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,500,000 հազար ՀՀ դրամ գումարով: